

ՅԵ. ՅԱՐՈՍԼԱՎԾՈԿԻ

ՆԱՐՈԴՆԻԿՈՒԹՅԱՆ
ԶԱ Խ ԶԱ Խ ՈՒՄԸ
ՄԱՐՔՍԻԶՄԻ ԿՈՂՄԻՑ

Գ Ե Տ Տ Բ Ը

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵԽԻՆԱՆ • 1939

10 APR 2018


91-

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՅ ՅԵՐԿՐԵԵՐԻ, ՄԻԱՅՆ

ՅԵՄ. ՅԱՐՈՍԼԱՎԸԿԻ

ՆԱՐՈԴՆԻԿՈՒԹՅԱՆ
ԶԱԽԶԱԽՈՒՄԸ
ՄԱՐՔՄԵԶՄԻ ԿՈՂՄԻՑ

Թարգմանված և 2-րդ, ուղղված
իրատարակությունից



ՊԵՏՀՐԱԾ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ • 1939

Մեկ քառորդ դարի ընթացքում, նախքան բոլշևիկյան կուսակցության առաջացումը, կուսակցություն, վորը ջախջանից նարողնիկությանը, մարքսիզմի իրեն համար ճանապարհ եր հարթում մեր յերկրում՝ հաղթահարելով նարողնիկական իդեոլոգիան, մերկացնելով նարողնիկների վոչ միայն սխալ, վոչ-զիտական, մանր-բուրժուական թերթաները, այլև պայքարի՝ պրոլետարիատի համար անպետք, վնասակար այն մեթոդներն ու միջոցները, վոր կերպառում եյին նարողնիկները:

«Մարքսիզմը մեղ մոտ աճել և ամրացել է նարողնիկության (նարողովորականության և այլնի), վորպես մարքսիզմի ամենավոխերիմ թշնամու, դեմ մզած պայքարում և նրա իդեալան դրույթների, քաղաքական պայքարի միջոցների և մեթոդների (անհատական տեսող, վորը բացառում և մասսայական կուսակցության կազմակերպումը) ջախջանման հիման վրա»¹:

Իդեալան պայքարը, պրոլետարիատին, մարքսիզմին թշնամի նարողնիկական թերթաների ու պրակտիկայի մերկացումն ու ջախջախումն անհրաժեշտ նախապայման հանգիստացան թուսատանում սոցիալ-դեմոկրատական քանվորական կուսակցությունն ստեղծելուն:

Բանվոր դաստիարակի թշնամիների դեմ, մարքսիզմ-ին նիզմից կատարվող շեղումների դեմ մզած պայքարի բոլոր այս ետապներում բոլշևիկյան կուսակցությունն անգաղբում պայքարում եր նարողնիկության դեմ, ինչ ձևեր ել այն ընդուներ:

Բոլշևիզմի հաղթանակը, պրոլետարիատի դիկտատուրայի նվաճումն ապահովող պայմաններից մեկը նարողնի-

¹ Համկ(ր)կ Կի-է վորոշումը «Մոտակա ժամանակում կատարելիք պրոպագանդիստական աշխատանքի մասին», «Правда» 14 Հունիսի, 1935 թ.

ЕМ. ЯРОСЛАВСКИЙ
РАЗГРОМ НАРОДНИЧЕСТВА
МАРКСИЗМОМ

Армгиз—Издательство полит. литературы
Ереван, 1939



11-3619597

կության իդեալան լիակատար ջախչախումն եր, իսկ հետո
նրա կազմակերպությունների ջախչախումը, կազմակերպու-
թյուններ, վորոնք բանվոր գասակարգի դիկտատուրայի
ժամանակաշրջանում կանգնեցին Հակահեղափոխության
ուղղությամ:

Բոլշևիկյան կուսակցության կենտրոնական կոմիտեն
1935 թ. պրոպագանդիստական աշխատանքի վերաբերյալ,
կուսակցության պատմության ուսումնասիրության վերա-
բերյալ իր ընդունած վորոշման մեջ առանձնապես ընդ-
գծում ե, թե անհրաժեշտ ե ճիշտ լուսաբանել մարքսիզմի
մղած պայքարը նարուդնիկության դեմ, մերկացնել նրա
ները, վորոնք խանդարում ելին մասսայական բանվորական
կուսակցության կազմակերպմանը:

Հենց այդ խնդրին ել ծառայում ե ներկա բրոցյուրը:

I. ՆԱՐՈԴՆԻԿԱԼԻԹՅԱՆ ԵՅՈՒԹՅՈՒՆԸ

Նարոդնիկական շարժումը յերեան յեկալ անցյալ դարի
60-ական թվականներին վորակե շարժում ուզուչին ինտե-
լիգենցիայի մեջ: Նարոդնիկների մեծամասնությունը մասն
չինովնիկների, ծառայողների զավակներ ելին. նրանց մեջ
քիչ չելին քահանաների և մանրակալվածքային ազնվական-
ների զավակները: Շարժմանը հարում ելին նույնիսկ մի-
քանի կալվածատերեր (որինակ, Լիզոդուրը): Նարոդնիկնե-
րի մեջ մենք հանդիպում ենք նաև զինվորականների, սպա-
ների խմբին՝ Սուխանովին, Շտրոմերդին, Աշենբեններին
և ուր: : Բանվորների շրջանում մզված նարոդնիկական պրո-
պագանդան շարժման մեջ ներդրավեց մի խումբ բանվոր-
ների (Պյոտր Ալեքսեյել, Ստեղան Խալտուրին, Սեմյոն
Ադապով, Վիկաոր Ոբնորսկի և ուր): Նարոդնիկական
շարժման դործիչների մեջ ամենից քիչը զյուղացիներն ելին,
թեև նարոդնիկներն իրենց համարում ելին ամենից առաջ
ամբողջ զյուղացիության շահերի արտահայտիչներ:

Իսկ ի՞նչ ելին քարոզում նարոդնիկները, վո՞րն եր
նրանց թեորիաների եյությունը, վորոնց ուեմ պայքարում
ելին մարքսիզմի հիմնադիրները—Մարքսն ու Ենդելը և
հետո անդադրում պայքար ելին մզում պրոլետարիատի
առաջնորդներ Լենին, ու Ստալինը և բոլշևիկյան կուսակ-
ցությունը:

«Ինչպիսի՞ ժառանգությունից ենք մենք հրաժարվում»
Հողվածի մեջ Լենինը նարոդնիկությանը հետեւյալ բնորո-
շումն է տալիս.

«Նարոդնիկություն ասելով մենք հասկանում ենք հա-
յացքների մի սիստեմ, վորն իր մեջ պարունակում ե հետե-
վյալ յերեք դժերը. 1) Ռուսաստանում կապիտալիզմն ան-
կում, ոեզրես նաևաչելը: Այստեղից՝ ձգտումներ ու ցան-
կություններ՝ «կասեցնելու», «կանգնեցնելու», «դադարեց-
նելու» գարավոր հիմքերի «հեղարեկումը» կապիտալիզմի

կողմից և ռեալիզիոն այլ վայնասուններ: 2) Ընդհանրապես ռուսական տնտեսական իրակարգի և մասնավորապես զյուղացու՝ իր համայնքով, արտելով և այլնով միասին՝ ինքնուրույնությունը նաևաչելը: Ռուսական տնտեսական հարաբերությունների նկատմամբ հարկավոր չեն համարում կիրառել ժամանակակից գիտության մշակում հասկացողությունները հասարակական տարրեր դասակարգերի և նրանց կոնֆլիկտների մասին: Համայնական գյուղացիությունը գիտում և վլորպես ինչ-վոր ավելի բարձր, ավելի լավ բան կապիտալիզմի հետ համեմատած, հանդիսանում է «Հիմքեր» խմբականացում: Գյուղացիության մեջ բացասվում և սքողվում են նույն այն հակասությունները, վլորոնք հատուկ են առլրանքային և կապիտալիստական ամեն մի տընտեսության, բացասվում և այդ հակասությունների կապը նրանց ավելի զարգացած ձեր հետ, վորդ գյուղություն ունի կապիտալիստական արդյունաբերության մեջ և կապիտալիստական հողագործության մեջ: 3) Յերկրի «ինտելիգենցիայի» և իրավական-քաղաքական իրմանքների՝ հասարական վորոշ դասակարգերի նյութական շահերի հետ ունեցած կապն անտեսելը¹: Այսպես եւ Լենինը բնորոշում նարոդնիկության եյությունը:

Նարոդնիկները կարծում եյին, վոր Ռուսաստանը պետք է առանձնահատուկ ուղիով զարդանա, վորը վոչ մի ընդհանուր բան չունի ուրիշ յերկրների զարգացման հետ: Ռուս գյուղացիներին նրանք համարում եյին վաղեմի, բնածին սոցիալիստներ այն պատճառով, վոր նրանց մոտ ճորտատիրության ժխամանակներից մնացել եր համայնական հողատիրությունը: Ռուսական հենց այն համայնքը, վորը «ամենահարմար ձեն եր՝ քողարկելու համար կուլակացին ճնշումը և եժան միջոց եր ցարիզմի ձեռքին՝ գյուղացիներից հարկերն ըստ համապարտ յերաշխափորության սկզբունքի հավաքելու համար»², նարոդնիկներն ապագա սոցիալիստական հասարակության բջիջն եյին համարում:

¹ Եթին, Հ. Ա., ռուս. հրատ., եջ 321.

² Համկ(բ)Կ պատմություն: Համառոտ գառընթաց, հայ. հրատ., եջ 20.

Ռուսաստանը, նրանց կարծիքով, պահպանելով համայնքը, չափեառ և անցնի կապիտալիզմի ստաղիայով, այն կարող է մի կողմը թողնել այլ ստաղիան, կլարողանա անմիջականորեն անցնել սոցիալիստական դյուղացիական հեղափոխությանը: Գյուղացիական համայնքը կապիտալիզմի դեմ ամենափրկարար միջոցը համարելով, նրանք ձգտում եյին ինչ եւ վոր լինի պահպանել այն:

Ռուսաստանում զարգացող կապիտալիզմը նարոդնիկները դիտում եյին վորպես արիեստական յերկույթը: Նրանք կարծում եյին, թե կապիտալիզմը մեզ մոտ արհեստականութեն տարածել եւ ցարական կառավարությունը՝ հովանավորող մաքսերի ուժությամբ: Նրանք բացասում եյին կապիտալիզմի ներթափանցումը գյուղատնտեսության մեջ, չեյին նկատում գյուղի չերտավորումը, վոր առաջացել եր կապիտալիզմի ներթափանցումից նրա մեջ: Ռուսաստանում կապիտալիզմի զարգացումը ուղղենու, անկում համարելով, նրանք չեյին հասկանում, վոր կապիտալիզմը կապված է վոչ միայն շահագործող դասակարգել՝ բուրժուազիայի յերկան գալու հետ, այլ վոր նա մյուս բնեռում կենտրոնացնում, հավաքում և պրոլետարների դասակարգին, վորը կապիտալիզմի գերեզմանափորն է հանդիսանում և նոր, սոցիալիստական իրակարգի ստեղծողը: Բանվոր դասակարգի զարգացումն ել նարոդնիկները չարիք եյին համարում, այն «պրոլետարիատականության խոց» անլանելով: Ապագայի մարդ նրանք սխալ կերպով մուժիկին եյին համարում և վոչ թե բանվորին:

«XIX դարի 80-ական թվականներին, — գրում եր ընկեր Ստալինը նարոդնիկների թերիաների մասին, — ոռուսական չեղափոխական ինտելիգենցիայի ըրջանում նշանավոր վեճ առաջացավ: Նարոդնիկներն ասում եյին, վոր գլխավոր ուժը, վորը կարող է իր վրա վերցնել «Ռուսաստանի աղատագրությունը»—դա չքայլոր գյուղացիությունն է: Ինչու—հարցնում եյին նրանց մարքսիստները: Վորովչետե, — ասում եյին նրանք, — գյուղացիությունն ամենքից ավելի բազմամարդ է և միաժամանակ ամենքից ավելի չքայլոր և ոռուսական հասարակության մեջ: Մարքսիստները պատասխանում եյին, — ճիշտ է, վոր գյուղացիությունն

այսոր մեծամանություն և կազմում և շատ չքավոր ե.
բայց մի՞թե բանն այդ ե: Գյուղացիությունն արդեն վա-
ղուց մեծամանություն և կազմում, բայց մինչև այսոր նա
առանց պրոլետարիատի ողնության վոչ մի նախաձեռնու-
թյուն հանդես չի բերել «ազատության» համար մղվող
պայքարում: Իսկ ինչո՞ւ: Վորովհետեւ գյուղացիությունը
վորպես գաս որ-որի քայլայվում ե, բաժանվում և պրոլե-
տարիատի և բուրժուազիայի, մինչդեռ պրոլետարիատը,
վորպես դասակարգ, որ-որի աճում և և ամրապնդվում:
Յեկ չքավորությունն այստեղ վճռող նշանակություն չու-
նի. «Բոսյակները» պյուղացիներից ավելի չքավոր են, սա-
կայն վոչ վոք չի կարող ասել, վոր նրանք իրենց վրա
կվերցնեն «Ծուսաստանի աղատագրությունը»:

Բանը միայն այն է, թե ով և աճում և ով և ծերանում
կյանքում: Յեկ վորովհետեւ պրոլետարիատը միակ դասա-
կարգն է, վորն անընդհատ աճում և և կյանքի յի ձգութում,
դրա համար ել մեր պարտքն ե՝ կանդնել նրա կողքին և այն
ճանաչել վորպես ոռուսական հեղափոխության դիմավոր
ուժը,—աղատասխանում եյին մարքսիստները: Ինչպես տես-
նում եք, մարքսիստները դիմականական տեսակետով եյին
նայում հարցին, այն ժամանակ, յերբ նարողներները դա-
տում եյին մետաֆիզիկորեն, վորովհետեւ կյանքի վրա նա-
յում եյին վորպես «մի կետում սառած բանի վրա»¹:

Նարադները աղավարում եյին պետուրյան եյու-
թյունը և դերը:

Պետությունը, նրանց կարծիքով, մի դասակարգի կող-
մից մյուսին ճնշելու աղարատ չե, այլ բյուրոկրատական-
չինովնեկան աղարատ ե, վորը կանդնած և դասակարգե-
րից վեր և հալասարապես ճնշում և բնակչության բոլոր
դասակարգերին: Պետությունը վոչ մի ընդհանուր բան չու-
նի գոյություն ունեցող կարգի հետ: Այն, նարոդնեկ Տկա-

չելի կարծիքով, «կախված ե ողում», և դրա համար ել
բոլորովին հեշտ և նրան վոչնչացնել¹:

Ինտելիգենցիայի դերը նարդնիկները նույնպես սխալ
եյին գնահատում: Ուուս ինտելիգենցիային նարոդնիկները
համարում եյին չկտակած հասարակական վորոշ դասակար-
գերի շահերի հետ, համարում եյին նրանցից անկախ:

Նարոդնիկների այդ պնդումները ցույց են տալիս, վոր
նրանք բոլորովին չեյին ըմբռնում հասարակական զարգաց-
ման որևէքները, այդ տեսակետից հետամնաց մարդիկ եյին
և հանդեցին պատմությունը կերառող «Քննադատաքար մտա-
ծող անհատների» վերաբերյալ հակադիտական և հեղափո-
խության համար միասնակար թերությաի մշակմանը: Պատմա-
կան պրոցեսի շարժիչ ուժը, նարոդնիկների կարծիքով, վոչ
թե դասակարգային պայքարն ե, այլ «քննադատաքար մտա-
ծող անհատները», վորոնք խաղաղ պրոպագանդայով ժողո-
վըրդին նախապատրաստում են սոցիալիզմի համար:

Այդ թերությաի հեղինակը, Լավրովը, ուներ «քննադա-
տաքար մտածող անհատների» բանակ նախադատաքառու-
ծրադիր-պլան: Նա «Վորեդ» ժուռնալում այսպիսի հաջիվ
տվեց: Յերիտասարդների Կիջից յելած համոգված անհատ-
ների «առաջին հարյուրյակը» «սկսում ե իր խաղաղ պրո-
պագանդիստական աշխատանքը: Պրոպագանդիստներից յու-
րաքանչյուրն իր աշխատանքով ստեղծում և քննադատաքար
մտածող նոր անհատներ, այնպես վոր ամեն տարի ներ-
գրավված հետևորդներից միայն կենն և մնում աշխատան-
քում, պիտանի և կայուն: Այն ժամանակ, թվաբանական
ճիշտ հաշվով, յերկու տարուց հետո ժողովրդից ներդըրկ-
ված կիններ քննադատաքար մտածող պիտանի անհատներ
200 մարդ, 4 տարուց հետո—248, իսկ 6 տարուց հետո—
260 մարդ, իսկ ժողովրդի միջից յելած այդ պրոցեսու-
ներն, իրենց հերթին, չորս տարուց հետո ժողովրդի միջից
կիներդը պակաս կին 2400 մարդ, իսկ 6 տարուց հետո 23576
մարդ: Այսպիսով, 6 տարուց հետո միայն կեններ արդեն

¹ Ստալին, «Ախալի ցիոնիզմ» թերթի 1906 թ. հունիսի 21-ի
№2-ում տպագծած հոդվածը: Յիսոտաք բերված և ըստ Բերիայի «Անդրկով-
կասի բուշեկյան կազմակերպությունների պատմության հարցի շուր-
ջը» գրքի, հայ. Հրատ., եջ 99—100, 1936 թ.

¹ Տկաչեվը նարոդնիկական աշխատանքում եք թվանկա-
մբի հոսանքին, վորոնք հնարավոր և անհրաժեշտ եյին համարում իշ-
խանության զավթումը նեղ գավազարական կազմակերպության միջոցով:

Հեղափոխական ամբողջ մի բանակ, վորի գնդերը 10 ամ-
րուց հետո կկազմելին արդեն հարյուր հազարներ»:

Սակայն այդ ծրագիրը չափազանց դանդաղ թվաց Բա-
կունինի և Տկաչելի ամելի անհամբեր տրամադրված կող-
մանակացների համար, վորոնք հավատացած եյին թե ժողո-
վուրդն արդեն պատրաստ է հեղափոխության համար:

Բակունիստները, գյուղացիներին բնածին սոցիալիստ-
ներ համարենլով, բացառում եյին պրոպագանդայի անհրա-
ժշտությունը: Նրանք կարծում եյին, թե բավական ե մի-
այն, վոր հեղափոխականները կոչ ամեն գյուղացիներին, և ա-
հանրանք բոլորը կապստամբեն և կլինի «Ընդհանուր բունտ»,
վորը կկործանի պետությունը, կվոչնչացնի ամեն մի իշ-
խանություն, և հենց մեկեն վրա կհասնի ավտոնոմ ձևով
կառավարվող համայնքների անարխո-կոմունիստական իրա-
կարգը: Տկաչելն ասում եր, վոր «Հեղափոխություն նա-
խալատրաստելլ—այդ ամեննեին հեղափոխականի գործը
չե, այն նախապատրաստում են շահարդողները, կազի-
տալիստները, լիրերաները, պրոլետարիատները և այլն:
իսկ հեղափոխականը չի նախապատրաստում, այլ անում է
հեղափոխությունը»: Յել այդ նարոդնիկական հոսանքն իր
ծրագրի յելակետ ուներ «քննադատաբար մտածող անհատ-
ների» թեորիան:

Ավելի ուշ առանձնապես ջերմորեն լավը կամ պաշտ-
պանում եր Ն. Կ. Միխայլովսկին—«Հերոսների և ամբոխի»
թեորիայի ստեղծողը:

Միխայլովսկին չեր ընդունում հասարակության դա-
ստիարակյին բաժանումը և դասակարգային պայքարը: Նա
փորձում եր ապացուցել, վոր ժողովուրդը բաժանվում է
Հերոսների ու ամբոխի և պատմությունը կերտվում է հե-
րոսական անհատների կողմից: Հերոսները—որպես «քննա-
դատաբար մտածող» այն «անհատներն են», վորոնք ամբո-
խին կարող են տանել ցանկացած ամեն մի ուղղությամբ:
Ամբոխը չի հանդիսանում քաղաքականապես ձեավորված
գորևե մի բան. ըստ Միխայլովսկու կարծիքի, նրան կա-
րելի յէ շրջել ուղածդ կողմը:

Այդ թեորիաները կարող եյին կազմավորվել միայն
այնպիսի մարդկանց գլուխներում, վորոնք չեն հասկանում

կապիտալիստական հասարակության կառուցվածքը, չեն
տեսնում ինտելիգենցիայի դասակարգային բնույթը, չեն
տեսնում, վոր կա բուրժուուական ինտելիգենցիա և կա պրո-
լետարական ինտելիգենցիա, վոր կան կապիտալիստներ
և բանվորներ, կարգածատերներ և գյուղացիներ—միմյանց
հակագիր չահեր ունեցող դասակարգեր և վոր պետական
ապարատի միջոցով կապիտալիստները ճնշում են բանվոր-
ներին և այն:

«Հերոսների ու ամբոխի» նարոդնիկական թեորիայից
բխում եր անհատական տեսորի նարոդնիկական տակտի-
կան, վորը բացառում եր մասայական բանվորական կու-
սակցություն ստեղծելու հնարավորությունը, տակտիկա,
վորը թշնամի յէ հեղափոխական մասայական շարժման:

Նարոդնիկության այդ ամենավասարակար թեորիաների
և տակտիկայի մերկացմանն է նվիրել կենին իր առաջին
«ի՞նչ են «ժողովրդի բարեկամները» և ի՞նչպես են նրանք
մարտնչում սոցիալ-դեմոկրատների դեմ» և «ի՞նչպիսի՞ ժա-
ռանդությունից ենք մենք Հրաժարվում» աշխատություն-
ները:

«Նարոդնիկությունը,—դրում եր կենինը «Մանր-բուր-
ժուական և պրոլետարական սոցիալիզմ» Հոդվածի մեջ,—
վորոշ չափով ամբողջական ու հետևողական ուղղունք է
յեղել: Ժխովել և կապիտալիզմի տիրապետությունը Ռու-
սաստանում: Ժխովել և Փարբիկա-գործարանային բանվոր-
ների՝ վորպես ամբողջ պրոլետարիատի առաջավոր մար-
տիկների գերը. Ժխովել և քաղաքական հեղափոխության և
բուրժուատկան քաղաքական ազատության նշանակությունը.
Քարոզվել և միանդամելից սոցիալիստական հեղաշրջում,
մանր գյուղական տնտեսություն ունեցող գյուղացիական
համայնքից բղաջում հեղաշրջում»¹:

Այսպիսով, նարոդնիկները, չընդունելով, վոր Փարբի-
կա-գործարանային պրոլետարիատն ընդունակ և գյու-
ղացիության ինքնակալության դեմ պայքարի տանելու և
ցարիզմը վոչնչացնելու, լավագույն դեպքում հեղափու-

¹ Կենին, 4. VIII, հայ. հրատ., էջ 513.

թյան մեջ պրոլետարիատին ոժանդակ դեր ելին հատկաց-
նում:

70-ական թվականների նարողնիկները բացառում ելին «քաղաքական հեղափոխության և բուրժուական քաղաքա-
կան ազատության նշանակությունը»¹: Նրանք կարծում
ելին, վոր գյուղացիությունն արգեն պատրաստ և սոցիա-
լիստական հեղափոխության համար և քաղաքական պայ-
քարի նախապատրաստման կարիք չի պառա։ Բավական և
միայն հրում տալ, և գյուղացիությունը վոտքի կենի սո-
ցիալիստական հեղափոխության համար, —այսպես ելին
մտածում ու քարոզում նարողնիկները։ Ուստի նրանք բա-
ցառում ելին քաղաքական պատրաստության համար, քաղաքա-
կան ու ֆորմների համար պայքարելու անհրաժեշտությունը
և քարոզում ելին միանդիմից սոցիալիստական հեղաշըր-
ջում, վորը յենում եր գյուղացիական համայնքից՝ նրա
մանը գյուղատնտեսությամբ։ Միանդաման պարզ ե, վոր
այլպիսի «գյուղացիական սոցիալիզմը» վոչ մի ընդհանուր
բան չունի հեղափոխական գիտական սոցիալիզմի հետ։

Ռուսամատանի համար զարգացման այլ, Արևելուաքի-
կամիտալիստական յերկրներից տարբեր ուղղու քարոզը,
««Հայրենիքի համար այլ ուղիների» հնարավորության մա-
սին վիլխովայելը, այդ—նարողնիկության միմիայն արտա-
քին գղեստալորումն ե, —դրում եր Լենինը։ Իսկ նրա բո-
վանդակությունը ուստական մանր արտադրողի, մանր
բուրժուայի շահերի և տեսակետի ներկայացուցչու-
թյունն ե»²:

Հենց նրա համար, վոր նարողնիկները մանր արտա-
դրողի, մանր սեփականատիրոջ շահերն ելին ներկայաց-
նում, բայց վոչ յերբեք սոցիալիստական շարժման շահերը,
նրանք հետամնաց, մանր-բուրժուական ելին, և վոչ թե սո-
ցիալիստական կուսակցություն, և շատ բաներում մի քայլ
բան ելին անում լուսավորիչների համեմատությամբ, վո-
րոնք հանդես են յեկել մինչեւ նարողնիկները։

¹ Լենին, Հ. VIII, հայ. հրատ., Եջ 513.

² Լենին, նարողնիկության անտեսական բովանդակությունը և նրա
քննադատությունը պ. Սարուվելի գրքում, Երկ. 4. I, հայ. հրատ.,
Եջ 502.

II. ՀՈՒՍԱՎՈՐԻՉՆԵՐՆ ՈՒ ՆԱՐՈԴՆԻԿՆԵՐԸ

Ռուսամատանի համարակական հեղափոխական շարժման
պատմության մեջ մինչև նարողնիկությունը աչքի ընկնող
տեղ են դրավում լուսավորիչները։ Լենինը լուսավորիչներ
եր անվանում 40—60-ական թվականների համարակաշան
այն գործիչներին՝ Յելինսկուն, Գերցենին, Դոբրոլյուրո-
վին, Զերնիշեսկուն և ուրեմն, վորոնք այն պահին, յերբ Ռու-
սաստանի բանվոր գաղաքարզը գեռ հանդես չեր յեկել պատ-
մական պայքարի ասպարեզ վորպես գլխավոր հեղափոխա-
կան ուժ, մարտիկներ ելին ցարական ինքնակալության և
ձորատիրության դեմ մզվող պայքարում և իրենց գրական
գործունեյությամբ նպաստում ելին Ռուսաստանի հասա-
րակական առաջավոր խավերի քաղաքական լուսավորու-
թյանը։

Մարքսիստների՝ դեպի լուսավորականությունն ունե-
ցած և նարողնիկության՝ դեպի լուսավորիչներն ունեցած
վերաբերմունքն ե նվիրել Լենինը 1897 թ. մի առանձին
հոդված—«Ի՞նչպիսի ժառանգությունից ենք մենք հրաժար-
վում»¹։ Այդ հոդվածը, վոր առաջին անգամ տպագրվել ե
ցարական ցենզուրայի տակ լեգալ կերպով լույս տեսած
«Վաղիմիր Ելյին, Տնտեսական ետյուդներ և հոդվածներ»
ժողովածվում, ստիպված եր խոսել այսպես կոչված յե-
ղոպոյշան լեզվով²։ «Մարքսիստներ» բառը ամեն տեղ փո-
խարինված ե «աշակերտներ» բառով։ «Հեղափոխություն»,
«Հեղափոխության խնդիրները», «Հեղափոխական տրադի-
ցիաները», «Հեղափոխական պայքարը» բառերն ամեն տեղ
փոխարինված են «Ժառանգություն» բառով։

Լենինն այդ հոդվածում պատասխանում եր լիբերալ
նարողնիկներին—Միխայլովսկուն, Յուժակովին, Կրիվենկո-

¹ Լենին, Հ. II, առօս. հրատ., Եջ 303—338.

² Յեղապահ—հին առակազիք. յեղուղոյշան լեզու—տյլաբանական։

յին՝ նրանց այն մտացածին բաների և կշտամբանքների առթեվ, իրը թե մարզսիստները («աշակերտները») հրաժարվում են հեղափոխական խնդիրներից, նախորդ սերունդների հեղափոխական-դեմոկրատական տրադիցիաներից («ժառանգությունից») և այլն։ Լենինն այդ հոդվածում ցույց տվեց, վոր մարզսիստները վոչ միայն չեն հրաժարվում անցյալի հեղափոխական լավագույն տրադիցիաներից, այլև հանդիպանում են ցարիզմի և ճորտատիրության մնացորդների դեմ ուղղված պայքարի իսկական չարունակողները, պայքարելով, սակայն, հեղափոխական այնպիսի զենքով, վորը միմիայն իրականում կարող և հասցնել ինքնակալության տապալմանը, այն ե՛ս ստեղծելով բանվոր գասակարդի մասսայական մարտունակ կուսակցություն մարզսիզմի հիման վրա, նախապատրաստելով բանվորների և գյուղացիների զինված ազստամբությունը ցարիզմի դեմ այդ կուսակցության զեկավարությամբ։ Սակայն մարքսիստները իրաժարվում են նարոդնիկական ժառանգությունից, վորչափով նարոդնիկությունը (հատկապես լիբերալ նարոդնիկությունը) մի ժայլ հետ արեց բուրժուա-դեմոկրատական հեղափոխության խնդիրների այն դրումից, վոր կար լուսավորիչների մոտ։ Մարքսիստները իրաժարվում են նարոդնիկության՝ պրոլետարիատին թշնամի՝ քերիքաներից և տակտիկայից և նրանց դեմ պայքար են մղում։

Իսկ ի՞նչպես եր լենինը բնութագրում 60-ական թվականների (մասամբ ել 40—50-ական) լուսակորիչներին։

Լուսավորիչը, գրում եր լենինը, նախ և առաջ, «...վորգենչնված և խորը թշնամությամբ նորտատիրական իրավունքի և տնտեսական, սոցիալական և իրավական բնագավառում գոյություն ունեցող նրա բոլոր ծնունդների հանդեպ»¹։

Լուսավորիչները-այդ նրանք են, ովքեր պայքարում եյին ինքնակալական-վոստիկանական, կարվածատիրական-ճորտատիրական պետության ամրող սիստեմի դեմ, ովքեր ճգլութում եյին տնտեսության այնպիսի ձևերի, վորոնք ան-

¹ Լենին, Օր ու առաջական առաջարկությունների մաս մասամբ, էջ 314։ Բնդզումն իմն ե—ՅԵ. ՅԱ. :

համատեղելի յեն ճորտատիրական հարաբերությունների հետ։

«ՅԵՐԿՈՐԴ մնորոշ գիծը, վոր ընդհանուր և ուսական ըոլոր լուսավորիչների համար, —լուսավորության, ինքնավարության, աղատության, կյանքի յեկըռպական ձևերի և ընդհանրապես նուսաստանի բազմակողմանի յեկըռպականացման ջերմ պաշտպանությունն ե։ Վերջապես, «լուսավորչի» յերրորդ բնորոշ գիծը ժողովրդական մասսաների, դիսավորապես գյուղացիների (վորոնք գեռես միովին աղատադրված չեյին կամ նոր հյին աղատադրվում լուսավորիչների դարաշրջանում) շահերի պաշտպանությունն ե, անկեղծ հավատն այն բանի, թե ճորտատիրական իրավունքի և նրա մնացորդների վերացումն իր հետ կրերի ընդհանուր բարորություն և անկեղծ ցանկություն՝ նպաստելու դրան։ Այս յերեք գծերն ել կազմում են այն բանի հյությունը, ինչը մեզ մոտ անձանում են «60-ական թվականների ժամանելություն», և կարեւոր ե ընդդեմ, վոր այդ ժառանգության մեջ վոչ մի նարոդնիկական բան չկա»¹։

Այն ժամանակ տակավին չկար վոչ միայն բանվորական կուսակցության սաղմը, այլ չկար նաև կազմակերպված բանվորական շարժում։ Լուսավորիչները գլխավորապես այն գյուղացիական դեմոկրատիայի ներկայացուցիչներն եյին, վոր շահագրգուված ե ամենից առաջ ճորտատիրության և նրա բոլոր մնացորդների վոչնչացումով։

«Զի կարելի մուռանալ, —դրում եր լենինը, —վոր այն պահին, յերբ գրում եյին XVIII դարի լուսավորիչները (վորոնց ընդհանուրի կողմից ընդունված կարծիքը դառնում է բուրժուազիայի առաջնորդների կարգը), յերբ գրում եյին մեր 40-ից մինչև 60-ական թվականների լուսավորիչները, հասարակական բոլոր հարցերը հանդում եյին ճորտատիրական իրավունքի և նրա մնացորդների դեմ պայքարելուն։ Հասարակական-տնտեսական նոր հարաբերությունները և նրանց հակասություններն այն ժամանակ դեռ սաղմնալին գրության մեջ եյին։ Ուստի և այն ժամանակ բուրժուազի-

¹ Լենին, Օր ու առաջական առաջարկությունների մաս մասամբ, էջ 314։ ՅԱ. :

այժմ թուելողների մեջ վոչ մի յուրաշահություն յերևան չեր գալիս . ընդհակառակին, թե՛ Արևմուտքում և թե՛ Ռուսաստանում նրանք միանդամայն անկեղծորեն հավատում ենին ընդհանուր բարորությանը և անկեղծորեն ցանկանում ենին այն, անկեղծորեն չեյին տեսնում (մասամբ եղ գեռ չեյին կարող տեսնել) հակասություններ այն իրակարգելու մեջ, վորն աճում եր ճորտատիրականից . . . այդ ցանկություններն արտահայտում են հասարակական պրոդեմուլիսակարգերի շահերը, տվյալ, այսինքն՝ կապիտալիստական ուղղիով ընթացող հասարակական ամբողջ զարդարման կենսական շահերը»¹:

Ղուղավար շնորհը ուղարկար խոշոր աշխատանք կատարեցին, զմանակութելով հասարակության պլոտքեսիվ խալերի հասարակական շարժումը։ Նրանք տվին ջարական ինքնակալության և ճորտատիրության բազմակողմանի քննադատությունը, նրանք ուղարկան հասարակությանը ծանությունը, Յեղրոպագայի առաջավոր կրեաների հետ (Բելինսկի, Զերնիշեսկի, Դոբրոլյութով), նրանք աջակցեցին բնական գիտությունների վերջին յեղբակացությունների ժողովրդությունը (որինակ, Դ. Ի. Պիսարեվի հիանալի հոդվածները գարավագանք էին)։

40-ական թվականների հասարակական չափումն աշխատավոր է հակայական գեր խաղաց Վլասոսրիոն Գրիգորյանի և Բելինսկիին (1811—1848)՝ «կատաղի Վլասոսրիոնը», ինչպես նրան կուցնուական գրականության մասին նրա գրած փայլուն, չեցին ոռուական գրականության մասին Կրաքուածների համար:

Բելինսկին նիկոլայինվյան ռեալիզմի պայմաններում, յերբ յերկը լավագույն մարդիկ յենթարկվում ելին անողոք հալածանքների, եր գրականագիտական հոդվածներում, նամակներում մասսաների վճռական բողոքն եր աբտահայտում ընդդեմ ճորտատիրության, հանդիսանում եր հեղափոխական գեմոկրատ, վորն ամբողջ հոգով ատում եր ճորտատիրությունը, սուր կերպով զգում եր ինքնակալու թյան ճնշումը: Բելինսկին սիրում եր ժողովրդին և հավաթյան ճնշումը:

¹ Ղերի, От какого наследства мы отказываемся? ԵՐԿ, 4. II.
Առաջ. Տասն. ԵՊ 315.

տում եր, վոր կդա մի ժամանակ, յերբ ժողովուրպը ձեռք
կընելի իր արատագրությունը:

Բելինսկին իր նամակներից մեկում պատկերավոր կերպով պայմանագրաժամանակամատ է, թե ցարական գրաքնության ինչպիսի ամենալավագան պայմաններում է ինքը հարկադրված լինում հանդես դալ գրականության մեջ։ Նա գրում է. «Բնությունն ինձ դատապարտել ե հաջել շան նման և վոռնալ շնադայլի նման, իսկ հանդամանքներն հրամայում են մլավել կատվի նման, պոչ թափ տալ աղվեսի նման»։

Բելմատկին կողմնակից եր մեծ ռւսոպահստ-սոցիալիստ-ների դղեաներին։ 1841 թ. սեպտեմբերի 8-ի նամակի մեջ նա գրում եր.

«Յես հիմա նոր ծայրահեղության մեջ եմ, —այդ սոցիալիզմի իդեան ե, վորն ինձ համար, իդեաների իդեան ե գարձել... հայտաբ ու գիտության ալֆան և ոմեգան¹... Այս (ինձ համար), կլանել ե թե՛ պատմությունը, թե՛ կրօնը, թե՛ փիլիսոփայությունը: Ուստի և դրանով եմ բացատրում յետ հիմա իմ կյանքը, քո և բոլոր նրանց կյանքը, ում հետ կանդիպել եմ յետ կյանքիս ուղղու մրա»²:

ԲԵԼԻՆՍՈՂԻՆ սուր կերպով տեսնում եր, վոր առանց հեղափոխության անհնարին կլինի փոխել Ռուսաստանի կարգերը: «Աստծո հաղթաբայաց թագավորությունը, — զրում ենա, — կհաստատվի յերկրի վրա վոչ թե իշեալական և չքնաղագեղ ժիրոնդայի մեղրածոր ու սքանչելի Փրազներով, այլ Ռոբեռտիերների ու Սեն-Ֆուսաների խոսքի և գործի յերկուայրի սրով»:

Լուսավորիչների մեջ մյուս նշանավոր դեմքն Ալեք-
սանդր Խլանովիչ Գերցենն է (1812—1870) : Լենինը Գերցենին
գնահատում էր վորպես հեղափոխական դործչի, վորը «պայ-
քարում էր յարկագիր վրա ժողովրդի տանելիք հաղթանակի
համար... Նա բարձրացրեց հեղափոխության դրոշը»³ Գեր-
ցենը մեզ թողել է գրական հարուստ ժառանգություն : Նա
արտասահմանում հիմնեց ուսուական առաջին ազատ տպա-

¹ Հունական այսուբենի տուաջին և վեցին բառը:—Ցե. Յա

² Белинский, Письма, 4. II, № 26.

³ ԱԵՑԻ, Պաмяտի Գերցեն, ՅԵՐԿՈՒ, Տ. XV, ՀՐԱՄԱ, հը 468.

րանը, վորտեղ տպադրվում էին «Полярная звезда», «Колокол» ժուռանալիները: Գերցենն անձնական նշանակալի միջոցներ հատկացրեց այդ գործին: Նա ալրեց Յելրոպալայեր 1848 թ. հեղափոխությունը: «С того берега» գրքում և «Письма из Франции и Италии»-ում Գերցենը ավել բուժուազիայի և բուժուական իրակարգի վայր քննադատությունը: Բայց, տեսնելով հեղափոխության սպառությունը, Գերցենը չըմբռնեց, վոր 1848 թ. կործանվեց վոչ թե սոցիալիզմի իդեան (ինչպես կարծում եր Գերցենը), — վորվհետեւ պրոլետարական սոցիալիզմը հենց ծնվում եր վորիկների մեջ, 1848 թ. դասակարգային մարտերի մեջ, — այլ կործանվեց բուժուական և մանր-բուժուական սոցիալիզմի իդեան, վորի տարատեսակություններից մեկն եր նաև Գերցենի սոցիալիզմը:

1848թ. Հեղափոխության պարտությունից հետո Գերեցենն սկսեց սկեպափիղը բերաբերվել Արևմուտքի հեղափոխական շարժմանը: Նա սկսեց քարոզել, թե սոցիալիզմը հնարավոր է միայն Ռուսաստանում, վորովհետեւ նրանում պահպանվել է գյուղացիական համայնքը, վորովի միջոցով, մի կողմը թողնելով կապիտալիզմը, կարելի յե հասնել սոցիալիզմին: «Գերցենը «սոցիալիզմը» տեսնում եր դյուլացիալիզմին: Հոգի հետ ազատագրվելու մեջ, համայնական հոգիների՝ հոգի հետ ազատագրվելու մեջ . . .»¹: Գերցենը Մարքսի ու Ենգելսի զատիրության մեջ . . .: Գերցենը Մարքսի ու Ենգելսի պրոլետարական սոցիալիզմի հակառակորդն եր:

Աղոյլեաւարական սոցիալիզմի հակառակորդ է և
Մարքսն ու Ենգելմը շատ խիստ կերպով ելին դատա-
պարտում ե քննադատում Գերցենին նրա՝ սլավոնական նա-
ցիոնալիզմի վորով ունեցած յելույթների համար, նրա-
ուստական գյուղացիական համայնքի գերը մեծացնելու հա-
մար, մամուլում հաճախակի ցարի աղնիլ խորհրդատուի
գերում յելույթներ ունենալու համար։ Այսպես, 1855 թ.
մարտի 10-ին ցար Ալեքսանդր II-ի անունով գրած նամակին
մեջ Գերցենը գրում եր.

«Հասկանալի յե, իմ խաչվառը—առլու զելի սոցիալիստ եմ, Դուք՝ ինքնակալ կայսր՝ բայց Զեր

Գեղցինի՝ յարին ուղղած այդ նամակների առթիվ կե-
նը զրում եր.

«Գերցենը պատկանում էր կալվածատիրական, աղա-
մական միջավայրին։ Նա Ռուսաստանից հեռացավ 1847 թ.,
աշխատավ հեղափոխական ժողովրդին և չեղ կարող հա-
մատալ նրան։ Սյուտեղից ել նրա անթիվ քաղցրավուն
ամրակները «Կօլօկօլ»-ի մէջ, ուզոված Արքանդր Ա Կա-
ռոզին, վորոնք չի կարելի այժմ կարդալ առանց նորկան-
ութիւն։ Չերնիշևսկին, Դոբրոլյուսովը, Սերոն-Սոլովյովիչը, վո-
րոնք ներկայացնում եյին հեղափոխական-ուազնոչնեցների
որ սերունդ, Հազար անդամ իրավացի ելին, յերբ Գերցե-
նին կշտամբում եյին գեմոնիրատիզմից զեսպի լիբերալիզմ
առարած այդ նահանջների համար։ Սակայն, արդարու-
թյունը պահանջում է տուի, վոր, Գերցենի՝ գեմոնիրատիզ-
մի և լիբերալիզմի մէջև ունեցած բոլոր տատանումների
ամանակ, զեմոնիրատն այնուամենայնիվ հաղթում եր-
րանում»²։

Գերցենին նարողնիկներին մոտեցնում է և նրան նարող-իկության նախահռո դրության մեջ է դնում նրա վերաբեր-ությունը դեպի գյուղացիական համայնքը, նրա «գյուղացի-ական սոցիալիզմի» քերպան :

Գերցինը ուսւալորիէնների մեջ առանձնակի տեղ է
ըրավում։ Նա ցարական ինքնակալությունը քննադատում
ը վոչ այնպէս, ինչպէս Դոբրոլյուրովին ու Զերնիշևին,
ոչ թե գյուղացիակարի, վոչ թե պլեբեյակարի, այլ ա-
պահավարի։ «Կօլօկօլ»-ի 1859 թ. № 44-ում գետեղած
«Վեսъма опасно» հոդվածի մեջ Գերցենը հարձակվում էր
Զերնիշևինը և Դոբրոլյուրովին վրա՝ ցարիզմի հանդեպ
որսնց ունեցած անհաշտ վերաբերմունքի համար։ Զերնի-
շևին Գերցենին համարում էր «քառակուսի կալիլին»,
և կալիլինը բավականին գունատ լիբերալ էր։ Իր կյանքի
վերջում Գերցենն արգեն աղղեցություն չուներ հեղափո-

¹ Герцен, с. VIII, № 161.

² Լենին, Памяти Герцена, Ելբկ., չ. XV, էջ 400, 407

խական յերիտասարդության վրա, վորը պայքարում եր ավելի ուժիւալ դրոշակների տակ:

60-ական թվականների հեղափոխական-դեմոկրատականորեն տրամադրված յերիտասարդության մտքերի իշխողները և առաջնորդներն ելին Նիկոլայ Գավրիլովիչ Զերնիշևին (1828—1889) և Նիկոլայ Ալեքսանդրովիչ Դորույուբովը (1836—1861): Զերնիշևուն և Դորույուբովին Մարգար անվանում եր «ոռուական Լեսինգներ»¹: Մարգար «Կապիտալի» մեջ Զերնիշևուն մասին գրում և վարպես «ոռուամեծ զիանականի և քննադատի» մասին: Լենինը նույնպես բարձր եր գնահատում Զերնիշևուն և նրան «մինչմարգայան ժամանակաշրջանի մեծ սոցիալիստ» եր անվանում: Ն. Կ. Կրուպսկայան գրում եր, վոր Զերնիշևին Լենինի սիրելի դրոդն եր. այդ յերեւում և և Լենինի բազմաթիվ վկայակոչումներից Զերնիշևուն նկատմամբ, վորոնք համակված են մեծ լուսավորիչ-դեմոկրատի հանդեպ տածած սիրով և հարգանքով:

Զերնիշևին և Դորույուրովիլը իդեալան բարեկամության, փոխադարձ սիրո և հարգանքի հիանալի որինակ են ներկայացնում: Նրանք յերկուսն ել ուստոպիական սոցիալիստներ ելին: Դեռ 1848 թ. ուսպոնմբերին Զերնիշևին իր որատետրում գրում եր. «Ինձ թվում ե, վոր մարդկության վերջնական նպատակի նկատմամբ ունեցած համոզունքներովս յես վճռաբար գարձել եմ սոցիալիստների ու կոմունիստների և ծայրահեղ հանրապետականների պարտիզանը...»²:

Յարական կառավարությունը հանձին Զերնիշևուն չուտով տեսավ մի վտանգավոր թշնամի. և 1862 թ. հուլիսի 7-ին նրան բանտարկեց Պետրոպովկովսկ բերդի Ալեքսեյիվյան ուսլելինի մեջ: Զերնիշևին 1864 թ. մարտի 7-ին դատավարության և 1864 թ. մայիսի 19-ին Պետրոպուրդի Միտնայա հրապարակում հրապարակութեն այսպես կոչված

¹ Այսինք—գերմանական հայոնի լուսավորիչ-դեմոկրատ և գրական փնտագության:

² Չերնիշևսկի, Լիтературное наследие, 4. I, էջ 277, Թուապետատ, 1928 թ.

«քաղաքացիական մահապատճի» յենթարկվեց, ապա չղթայված նա ուղարկվեց Ներչլինովի տաժանավայրը, վորից հետո մի քանի տարի անցկացրեց մենավոր բանտարկության մեջ հեռավոր Յակուտիայի Վիլյույսկի բերդում:

Զերնիշևուն չեր ծածկում իր ատելությունը դեպի ցարիզմն ու ճորտատիրությունը: Նա կոչ եր անում գյուղացիական հեղափոխություն անելու: Գերցենի «Կօլո-Կօլ»-ի մեջ տպագրված իր նամակներից մեկում Զերնիշևունին դրում եր. «Վոչ, մեր գրությունը սարսափելի յէ, անտանելի յէ, և միայն կացինը կարող է մեզ փրկել, և վոչինչ, բացի կացնից չի ողնի»:

«Զերնիշևուն հանճարեղությունն եր հարկավոր, գրում եր Լենինը, —հատկապես, վորպեսզի այն ժամանակ, գյուղացիական ռեֆորմի հենց կատարման դարաշրջանում (յերբ նա բավականաչափ լուսաբանված չեր մինչեւ անդամ Արևմուտքում) մարդ այդպիսի պարզությամբ ըմբռներ նրա Հիմնական բուրժուական բնույթը, —վորպեսզի հասկանար, թե արդեն այն ժամանակ ուստական «հասարակության» ու «ակետության» մեջ թագավորում և կառավարում ելին հասարակական այն դասակարգերը, վորոնք անդառնալիորեն թշնամի ելին աշխատավորին և անսպայման նախորդում ելին գյուղացիության քայլայումն ու եքսպրոպրիացիան: Յեվ միաժամանակ Զերնիշևին հասկանում եր, վոր մեր հասարակական հակամարտ հարաբերությունները քողարկող կառավարության գոյությունը մի սոսկալի չարիք ե, վոր առանձնապես վասթարացնում և աշխատավորների դրությունը»¹:

Զերնիշևուն բերդում գրեց յուրահատուկ մի կտակ—իր նշանավոր «Խնչ անել» վեպը, վորի մեջ տվեց անհողոգուդ հեղափոխական-ուսպնոշինեցի կերպարը: Զերնիշևուն զիտական աշխատությունները, քննադատական հողվածները, գրական-գեղարվեստական աշխատությունները, նրա ամբողջ կյանքը մեզ թողել են լուսավորիչ-հեղափոխականի

¹ Լենին, ի՞նչ են «ժողովրդի բարեկամները» և ինչպես են նրանք մարտնչում սոցիալ-դեմոկրատների գեծ, Յերկ., 4. I, Հայ. հրատ., էջ 247.

ամենահրապուրիչ կերպարը, վորն արգեն 60-ական թվականների սկզբին կարողացավ տալ կապիտալիզմի հիմային խորը քննադատությունը:

Հեղափոխական դեմոկրատ, Զերնիշևսկին միևնույն ժամանակ նաև ուտոպիսական սոցիալիստ եր, և այն դերը, վոր նա հատկացնում եր դյուլացիական համայնքին, հիմք տվեց 70-ական և 80-ական թվականների նարողնիկներին, վորոնք շատ տեսակետներից լուսավորիչներից հետ ելին դնացել, Զերնիշևսկուն ել համարել նարողնիկության նախահայրը:

Նիկոլայ Ալեքսանդրովիչ Դորրոլյուբովը—նշանավոր դրական քննադատ և հրապարակախոս—մեռավ յերիտասարդ, ընդունենք 25 տարեկան հասակում, բայց իրենից հետո դրականության և հասարակական կյանքի մեջ խորը հետք թողեց: Դա հետևողական հեղափոխական զեմոկրատ եր, վորի խոսքն ունինդրում ելին, վորի յերկերով դաստիարակում ելին վոչ միայն ժամանակակիցները, այլև հեղափոխական յերիտասարդության ավելի ուշ սերունդները:

Какой светильник разума погас,
Какое сердце биться перестало!

գրում եր բանաստեղծ Նեկրասովը նրա մահվան առթիվ:
Դորրոլյուբովի կախարդիչ կերպարը մեզ թողել և Զերնիշևսկին «Пролог к прологу» պատմվածքում: Մարգսը «Կապիտալի» I հատորի թարգմանչին, նարողնիկ Դանիելսոնին (Նիկոլայ —ոնին) Դորրոլյուբովի մասին գրում եր. «Վորակու գրողի յևս նրան համարում եմ Լեսովնիկն և Դիդրոյին հավասար»: Ենթելու 1875 թ. «Եմիգրանտական գրականություն» հոդվածում կրկնեց այդ կարծիքը Դորրոլյուբովի մասին. «Մի յերկիր, վոր Դորրոլյուբովի և Զերնիշևսկու մասշտաբի յերկու գրողներ, յերկու սոցիալիստական Լեսովնիկներ և առաջքաշել, չի կործանվի այն բանից, վոր մի անդամ ծնել և այնպիսի խարդախ մի մարդ, ինչպես Բակունինն ե, և միքանի ահաս ուսանողիկներ, վորոնք՝ մեծադղորդ Փրազներ արտասանելով, փրվում են, ինչպես գորտեր, և, վերջիվերջո, իրար լափում»¹:

¹ Маркс и Энгельс, ч. XV, № 235.

Լենինը բազմիցս գրել ե սուսական հասարակական շարժման համար «մուժիկական դեմոկրատներ» Զերնիշևսկու և Դորրոլյուբովի ունեցած նշանակության մասին, ժամանանչելով առանձնապես այն, «...վոր նույնիսկ ճորտափրական Ռուսաստանում Դորրոլյուբովն ու Զերնիշևսկին կարողանում ելին ճշմարտությունն ասել...»¹: Զերնիշևսկին հիշում եր, վոր զրող Տուրգենեվը մի անդամ իր հետ ունեցած խոսակցության ժամանակ իրեն ասել ե. «Դուք հասարակ ոճ եք, իսկ Դորրոլյուբովը—ակնոցավոր ոճ»:

Տուրգենեվը դրանով ցանկացել ե ասել, թե Դորրոլյուբովն իր գրչով կարող եր ե'լ ավելի վտանգավոր հարվածներ հասցնել յարխմին, քան Զերնիշևսկին:

Անկասկած ե, վոր 70-ական թվականների նարողնիկները շատ բան են վերցրել լուսավորիչների իդեալական «ժառանգությունից»: Բայց նրանք ընդունեցին նրանց թեորիաներից թույլ կողմերը, իսկ ամենառութեղ կողմերը մերժեցին կամ թե աղավաղեցին, հետ նահանջեցին լուսավորիչների առաջավոր հայցքներից:

Իսկ հատկապես վո՞րն եր այդ նահանջը:

Ամենից առաջ այդ արտահայտվեց Ռուսաստանում կապիտալիզմի զարգացման հարցի նկատմամբ նարողնիկների ունեցած վերաբերմունքով: Լուսավորիչները հավատում ելին Ռուսաստանում կապիտալիզմի զարգացման պրոցեսիվ նշանակությանը: Նարողնիկները կապիտալիզմը Ռուսաստանում հայտարարում ելին անկում, ոեզրես, մի քայլ հետ: «Հասարակական տվյալ զարգացման նկատմամբ լուսավորիչների ունեցած ջերմ հավատի փոխարեն հանդես յեկավ անկուտահություն գեղի այն, պատմական ոպտիմիզմի մի և վողու կայտառության փոխարեն՝ սկսումիմիզմ և վհատություն, վորոնք հիմնված են այն բանի վրա, թե վորություն, վորոնք հիմնված են այն բանի վրա, ինչպես նրանք ընթանում են, այնքան ավելի վատ, այնքան ավելի դժվար կլինի լուծել նոր զարգացմամբ առաջադրող խնդիրները. Հրավերներ են յերեան դալիս «Հետ պահելու» և «կանդնեց-

¹ Լենին, Пацифизм буржуазный и пацифизм социалистический, Յերկ., չ. XIX, ուսւ. Հրատ., էջ 371.

նելու» այդ զարգացումը, թեորիա յէ հանդես կալիս, թե հետամնացությունը թուսաստանի բախտավորությունն ե և այն»¹:

Նարողնիկների նահանջը լուսավորիչներից արտահայտվեց նաև Ռուսաստանի ինքնուրույնության նկատմամբ նրանց ունեցած հավատով, պյուղացու համայնքի՝ և այնի իդեալականացումով, 60-ական թվականների լուսավորիչները «...ձգտում եյին Ռուսաստանը յեփրոպականացնել; Հավատում եյին նրան համայնքութական կուլտուրային հաղորդակից դարձնելուն, հոդ եյին տանում այդ կուլտուրայի հիմնարկները նաև մեր, բնավ վոչ ինքնուրույն հողի վրա փոխադրելու մասին»²: Նարողնիկները, իդեալականացնելով դյուլը, չնկատելով գյուղում տեղի ունեցող շերտավորման պրոցեսները, անտեսելով դրանք, փաստորեն դալիս եյին այն յեղբակացության, թե «ավելի լավ ե լճացում, քան թե կազմիտալիստական պրոդրեն... Մեկ անդամ անձնատուր լինելով ոռմանտիկական յերազանքների իշխանությանը, նպատակ գնելով պաշտպանելու և պահպանելու տնտեսական զարգացման հակառակ հիմքերը, նարողնիկն իրեն իսկ համար աննկատելի այդ թեք մակարդակով ցած դլորվեց այնքան, վոր հայտնիեց հողատիրոջ կողքին, վորը ամբողջ հողով վիավագում և պահպանել և ամրացնել «գյուղացու կապը հողի հետ»³:

Լուսավորիչների «ժառանգությունից» նարողնիկների կատարած նահանջների արդյունքներն ամփոփելով, լենին ասում ե.

«Այսպես ուրեմն, թեև նարողնիկությունը լուսավորիչների «ժառանգության» համեմատությամբ խոշոր քայլ արեց գեպի առաջ, դիելով Ռուսաստանի կապիտալիզմի հարցը, բայց մանր-բուրժուական տեսակետի և կապիտալիզմի սանտիմենտալ քննադատության հետևանքով այդ հարցի նրա աված լուծումն այնքան անբավարար դուրս յե-

¹ Լենին, От какого наследства мы отказываемся? Յերկ., 4. II., ռուս. հրատ., եջ 324.

² Նույն տեղում, եջ 325.

³ Նույն տեղում, եջ 325, 326—327.

կավ, վոր նարողնիկությունը հասարակական կյանքի մի ամբողջ շարք կարեւորագույն հարցերում «լուսավորիչների» համեմատությամբ հայտնվեց իեմուը: Նարողնիկության միացումը մեր լուսավորիչների ժառանգության ու տրադիցիաներին վերջիվերջու մինուս զուրս յեկալ. այդ նոր հարցերը, վոր ռուսական հասարակական մտքի առաջ դրեց Ռուսաստանի հետուագործությանը տնտեսական զարգացումը, նարողնիկությունը չվճռեց, նրանց նկատմամբ սահմանափակվելով սանտիմենտալ և ռեալիզիոն լամենտացիաներով (գանդատներով—Յ. Յ. Յ.), իսկ այն հին հարցերը, վորոնք դրվել եյին գեռ լուսավորիչների կողմից, նարողնիկությունը խճողեց իր ռոմանտիկայով և կասեցրեց նրանց լիակատար լուծումը»⁴:

Յեկ լենինը գլխավոր յեղբակացություն ե անում, թե միայն «աշակերտները», այսինքն՝ Մարքսի աշակերտները, մարքսիստները (լենինյանները), ճիշտ զնահատեցին լուսավորիչների գերն ու նշանակությունը և նրանք «...ժառանգության անհամեմատ ավելի հավատարիմ պահողներն են, քան նարողնիկները»⁵:

«Բայց ինքնըստինքյան հասկանալի յի,—գրում եր Լենինը,—վոր «աշակերտները» ժառանգությունը պահում են վոչ այնպես, ինչպես արխիվարիտունները պահում են հին թուղթը»⁶: Մարքսիստները, բոլշևիկները վոչ միայն իրենց վրա վերցրին բուրժուական-ղեծոկրատական հեղափոխության խնդիրների լուծումը, ինտիրներ, վոր դրել են զեռ 40—60-ական թվականների լուսավորիչները, և լուծեցին այդ խնդիրները. մարքսիստները, իդեալական չախջախինելով նարողնիկությունը, կազմակերպեցին բանվորական կուսակցություն, միավորեցին հեղափոխության հետևողական կողմնակիցներին և մասսաներին մարտի տարան սոցիալիզմի համար:

Լուսավորիչները չեյին ըմբռնում և 40—60-ական թվականների պայմաններում չեյին ել կարող ըմբռնել, վոր թե-

¹ Լենին, От какого наследства мы отказываемся? Յերկ., 4. II., ռուս. հրատ., եջ 330.

² Նույն տեղում, եջ 331.

³ Նույն տեղում, եջ 331—332.

քանվորական և թե՛ զյուղացիական մասսաների ազատագրումը, սոցիալիստական Ռուսաստանի ստեղծումը հարավոր կղառնա միայն պրոլետարական հեղափոխության Հաղթանակի շնորհիվ։ Այն ժամանակ դեռ առկա չեր այն պիսի պրոլետարիատ, վորն ընդունակ լիներ եր վրա վերցնելու պատմական այդ միստիան, չկար նաև բանվոր դասակարգի կուսակցություն, ընդունակ մասսաներին մարտի տանելու սոցիալիզմի համար։ Այդպիսի կուսակցություն առաջացավ անհամեմատ ավելի ուշ՝ 30 տարուց ավելի անդայն բանից հետո, յերբ մեծ լուսավորիչ Ն. Գ. Զերնիշեսկին տաժանավայր ուղարկվեց։ 30 տարի անց մտքի գիշանտ, ուրիշ դարաշրջանի մտքերի իշխող՝ Կաղէիմիր Իլյիչ Լենինը ուժեր և հավաքում և կազմակերպում ցարիզմի դեմ պայքարելու համար, հանուն սոցիալիզմի պայքարելու համար։ Յեվ վորպեսզի հողը հարթի այդ պայքարի համար, Լենինն ամենից առաջ պայքարում և նարոդնիկների դեմ, դրա հետ մեկտեղ յերեան հանելով լուսավորիչների ու նարադնիկների միջև յեղած տարբերությունը և լուսավորիչների հեղափոխական ժառանգության նշանակությունը ցարական ինքնակալության և ճորտատիրության մնացորդների դեմ բանվոր դաստիարակի մզած պայքարի համար։

III. ՆԱՐՈԴՆԻԿՆԵՐԻ ԳՈՐԾԱԽՆԵՑՈՒԹՅՈՒՆԸ

Իսկ ի՞նչպես եյին վորձում նարոդնիկները—զեմլեվոլականներն ու նարոդովոլականները իրականում ենուագործել իրենց ուսուպիական Շեորիաները։

«Земля и воля»-ն մի կազմակերպություն եր, վորը նուսաստանում 70-ական թվականներին ընդգրկել եր համարյա թե բոլոր մանր-բուրժուական հեղափոխական տարրերին։ Զի կարելի առել, թե այդ տարրերը միատեսակ եյին։ այսուղ կային վոչ միայն Ռուսաստանում սոցիալիստական գյուղացիական հեղափոխությանը հավատացող մարդիկ, այլև ամենախսկական կուլտուրաբեցերներ (կուլտուրա տարածողներ։ Հայ. քարգմ. Խմբ.) և լիբերալներ։

Գյուղացուն պարզաբանելու համար, վոր նա կարող է, յեթի ուզենա, փոխել իր կյանքը, վորովհետև նա ընածին սոցիալիստ և և ունի սոցիալիզմի համար նյութական բազա—գյուղացիական համայնքը, նարոդնիկները վորոշեցին «գնալ ժողովրդի մեծ»։ Հարյուրավոր նարոդնիկներ մեկնեցին գյուղ՝ գյուղացիներին վոտքի հանելու ջերմ ցանկությամբ։ Նրանք այնաեղ մեկնեցին վորպես ուսուցիչներ, բուժակներ, վորպես ատաղձագործներ, հյուսներ, կոշկակարներ, իրենց հետ վերցնելով «Хитрая механика»-յի, «Мудрица Наумовна»-յի նման աղիտացիոն բրոյցուրների թեթև բազա։ Բայց չուտով ժողովրդի մեջ գնալը նարոդնիկների մոտ խորը հիամթափություն առաջացրեց։ Գյուղացիները նարոդնիկների հետեւ չփնացին։ Նրանք չեյին հասկանում «սոցիալիզմի» նարոդնիկական պրոպագանդան։ Պարզվեց, վոր նարոդնիկներն ինչպես հարկն և չեյին ճանաչում և չեյին հասկանում գյուղացիներին։ Պարզվեց, վոր գյուղացիները յերազում են հետ ստանալ այն հողը, վոր կարվածատիրը կտրել-խել եյին 1861 թ. ուժիումն անցկացնելու ժամանակ, նրանց հետաքրքրում և գլխավորապես կալվածատիրական ստրկությունից աղատագրվելը։ Այնուհետեւ

պարզվեց գյուղացիների վոչմիատարրությունը, պարզվեց, վոր նրանց մեջ տեղի յե ունենում շերտավորվելը չքավորների և կուլակների—մի փաստ, վորը նաբողնիկները չեյին նկատում և չեյին ուղում նկատել: Նարդնիկներն այլիս չեյին կարող չնկատել, վոր գյուղացիական համայնքի ներսում և դյուղացիական արտելներում գյուղթյուն ունի շահագործում: Նրանք գործնականում համոզվում եյին, վոր իրենց չի հաջողվի գյուղացիներին պայքարի հանել հանուն սոցիալիզմի: Զեմլեվոլական Ազգակմանի խոսքերով, վորը հետագայում անցուվ չերնոսկերեղելականների կողմը, հատկապես այդ հանդամանքը հասցրեց այն բանին, վոր «ստիպողական անհրաժեշտություն եր համարվում դրավել այնպիսի գրություն, վորի մեջ հեղափոխականի համար, նյութական լիակատար ինքնուրույնության գեղքում, բայց ում եր լայն հնարավորություն՝ անցնելու ամենից ավելի շփման տվյալ վայրի բնակիչների հետ, մտնելու նրանց շահերի մեջ և որովհերու նրանց հասարակական գործերի վրա աղդեցություն ունենալուց»:

«Գյուղականները», այսինքն՝ գյուղում յերկարատև աշխատանք տանելու կողմանակիցները, սկսեցին ավելի հաստատուն «քնակավայրեր» հիմնել, աշխատում եյին հարմարվել, պարզանալ, ժողովրդին նմանելի, գառնալ խկական ատաղձարձներ, կոչկակարներ, ջրաղացաններ և այլն: Նարողնիկ Միխայլովը աշխատանք եր տանում հնագավան-սղանդավորների մեջ և դեպի ինքը վստահություն ներշնչելու համար հանգեց աղանդավոր-հերձվածող դառնալու անհրաժեշտության մտքին: «Ազանդավորների մեջ ունեցած գործունեյությունը,—պատմում է իր ինքնակենապղբության մեջ Միխայլովը,—յետ չափազանց սիրով եյի վերաբերվում և վորոշեցի հաղթահարել մեծ դժվարություններ: Յես սոխաված յեղա տառացիորեն հնադավանդառնալ, ստիպված յեղա դաժանորեն վարդիլ ինքս ինձ հետ, վատքից գլուխ ինձ ջարուել: Յես պետք ե ամեն բանում նմանելի այդ միջավայրին, վորպեսպի, նրան հավասարվելով, հնարավորություն ունենայի աղղելու նրա վրա»:

Արդյոք նարողնիկներին չա՞տ կողմանակիցներ հաջողվեց

ներդրավել իրենց այդպիսի աշխատանքով: Ավա՛զ, այստեղ ել հաջողությունները միանդամայն անհշան եյին: Վ. Ն. Ֆիդոները հիշում է. «Յես ապրեցի Պետրովսկի գավառում 10 ամիս, իմ մերձավորադույն ընկերները Վոլսկի գավառում՝ մի քիչ ավելի, և յես հաստատում եմ, վոր ամբողջ ժամանակի ընթացքում վոչ մի մարդ չմիացավ նրանց, թեև անդերում տեղավորվելն՝ արզեն հաստատված կապերի պայմաններում, չափազանց հեշտ եր: Կարելի յեր հուսահատվել հեղափոխական այն սուսաննությունից, վորի մեջ մենք ապրում եյինք»:

Գյուղական «բնակավայրերը» նույնպես հաջողություն չտվին, ինչպես և մասսայորեն զնալը ժողովրդի մեջ: Այստեղից ել հետագայում նարողնիկները յեղբակացություն արին, թե ժամանակակից պայմաններում աշխատել գյուղացիության մեջ—այդ միենույն է, թե ձկան նման զարկվել սառուցին:

Նարողնիկների այդ անհողությունը, այդ հիսաժափությունը գյուղացիության՝ նարողնիկների հասկացողությամբ սոցիալիստական բնությունից՝ առանձնապես վառ կերպով արտացոլվեցին այսպես կոչված «Զիգիրինյան գործ»ի մեջ:

Նարողնիկների մի խումբը, վոր մեկնել եր գյուղ, նարողնիկական պրոպագանդայի վերաբերմար գյուղացիների ունեցած անտարբերությունից հուսահատության հասնելով, վորոշեց խարեյութան միջոցով գյուղացիներին «բունտի» հանել:

Նարողնիկներ Ստեֆանովիչը, Բոխանովսկին, Դեյչը և ուրիշները, դալով Զիգիրինո գյուղը, համոզվեցին, վոր գյուղացիները յերազում են միայն հողի ավելացման մասին և նույնիսկ խնդրատարներ են ուղարկել մայրաքաղաք: Այն ժամանակ Ստեֆանովիչը վճռեց գյուղացիների կողմից ցարի մոտ ուղարկված խնդրատարի անվան տակ պատասխանը բերել գյուղացիներին այն ձեռով, թե հենց ցարն ե անմիջականորեն դիմում գյուղացիներին, վորի մեջ առված կլինի, իբր թե ցարը ուղում է հողը տալ գյուղացիներին, բայց կալվածառերեն ու չինովնիկները նրան խանդարում են այդ անել, և նա, Ալեքսանդր Ա ցարը, իբր թե կոչ ե

անում գյուղացիներին գաղտնի յեղայրություն կազմակեր-
սէլ կալվածատերերի դեմ պայքարելու համար :

Հենց այդ պլանն եւ Ստեֆանովիչը կատարեց : Նա պատ-
րաստեց մի մանիֆեստ—Ալեքսանդր II ցարի կողմից «բարձ-
րագույն տրված հրովարտակը» և այդ հրովարտակը բերեց
իր թե Պետերություն, ցարից : Այդ հրովարտակի մեջ սւ-
վում եր այն մասին, թե 1861 թ. ցարը հրամայեց թողնել
կալվածատերերին միայն կալվածատները «և Հողի ու ան-
տառի նույնպիսի քանակություն, վորովին կհանի նրանց
նախկին ճորտին ըստ տարբեր չնչային բաժանման» : Բայց,
անում եւ, մեղավոր են ազնվականները, վորոնք թափաժա-
ռանդ Ալեքսանդր Ալեքսանդրովիչի հետ մեկտեղ խորաման-
կությամբ ու խարեյությամբ գյուղացիների հողերը դադ-
թեցին իրենց համար և նրանց տուրքադրեցին ուժից վեր
փրկադնով :

Այնուհետեւ այդ հրովարտակի մեջ ասվում է . «ձեզ
համար մեր մզած քսանամյա անդադրում պայքարն ազնվա-
կանների դեմ մեկ՝ համոզեց, վերջապես, վոր մենք միանձ-
նաբար ի վիճակի չենք ոգնել ձեր ցավին և վոր միայն
դուք ինքներդ կարող եք թոթափել ձեր վրայից ազնվակա-
նական լուծը և ազատադրվել ծանր ճնշումներից և ուժից
վեր հարկերից, յեթէ համերաշխորեն զենքը ձեռքին ապլա-
տամրվեք ձեզ ատելի թշնամիների դեմ և տիրեք ամրով
հողին : Սույն համոզմունքով զեկավարվելով, ձեզ բոլորիդ,
մեզ հավատարիմ և վոչ թե մեր անարժան թագաժառանդ
Ալեքսանդր Ալեքսանդրովիչին իր դաշնակից ազնվականնե-
րով և մեծ իշխաններով, գյուղացիներիդ, ինչպես նաև
քաղքենիներիդ, հրամայում ենք. միացեք և կազմեցեք
«Գաղտնի գրուժինաներ» կոչվող գաղտնի ընկերություններ
այն նպատակով, վորպեսզի պատրաստվեք ապստամբելու
ազնվականների, չինովինիների և բոլոր բարձր գասերի
դեմ : Ով պատրաստ ե իր կյանքը զոհել մեծ զործի համար,
պարտավոր ե յերդում տալ հավատարիմ մնալու «Գաղտնի
գրուժինա» ընկերությանը : Այս ընկերությունները,—հրա-
հանգում և գյուղացիներին հրովարտակը,— պետք ե իրենց
պահեն ամենախիստ կերպով գաղտնի՝ ազնվականների իշ-
խանությունից և տերտերներից, վորոնք մեծ մասմար պա-

նական լրտեսներն են, և վոչ թե աստծու հոտի արժանավոր
հովիվները : Դավաճաններին չըկետք ե խնայել, և ամեն
վոք, ով կապանի մատնիչին, բարի և փրկարար գործ կա-
տարած կլինի :

Հրովարտակը խոստանում եր, վոր «ամբողջ հոգն ան-
տառներով և խոտհարքներով կդառնա ձեր սեփականու-
թյունն այնպես ձրի, ինչպես ջուրը, արեգակի լույսը և
աստվածային ամեն մի այլ պարզեց, վորը ստեղծված է
մարդու համար . չի լինի ձեզ ատելի ազնվականների իշխա-
նությունը, վորը չգիտե կարեկցություն տածել գեպի ձեզ,
և կթագավորի այն ժամանակ աղատություն և բարորու-
թյուն ուռւական հողի վրա . . . Այսպես ուրեմն, խաչակըն-
քիր քեզ, ուղղափառ ժողովուրդ և աստծու որհնությունը
հայցիր քո սուրբ գործի համար : Հիշիր, վորպես պատվի-
րան, սույն խոռոչերը, վոր ասաց քեզ քո բարեկամ-ցարը» :

Բայց այդ հրովարտակից Ստեֆանովիչը բերեց «Գաղտ-
նի գրուժինա» գյուղացիական ընկերության կանոնադրու-
թյունը», իր թե «բարձրագույն հաստատված նորին կայ-
սերական մեծություն թագավոր-կայսր Ալեքսանդր Նիկո-
լայևիչի կողմից» : Կանոնադրությանը կցված եր նաև յերդ-
ման տեքստը : Այդ յերդման մեջ գյուղացիները յերդվում
եյլն զենքը ձեռքին պայքարել կալվածատերերի, չինովինիկ-
ների և գյուղացիության մյուս թշնամիների դեմ :

«Յերդվում եմ, Ալեքսանդր Նիկոլայևիչի հրամանի հա-
մաձայն, զենքը ձեռքին պայքարել կալվածատերերի, չինով-
ինիկների և իմ յեղբայրակիցների ու իմ թագավոր Ալեք-
սանդր Նիկոլայևիչի ամեն տեսակ թշնամիների դեմ, վո-
րոնք խորտակել են մեր աղատությունը, և խլել մեղանից
մեր հողը, վորը առհավետ անվարձ ոգտագործման համար
տրված և մեզ հենց իրեն աստծու և թագավոր Ալեքսանդր
Նիկոլայևիչի կողմից . . . Յեթե խախտեմ սույն իմ յերդու-
մը, ապա տեր աստծու և նրա բոլոր սրբերի զայրույթն եմ
հայցում ինձ վրա և իմ ամրով սերնդի վրա, և թող հար-
վածեն ինձ ամեն տեսակի փորձանքներն ու դժբախտու-
թյունները, և թող չինայի ինձ յեղբայր-գրուժինիկի ձեռ-
քը : Ամենն :

Գյուղացիները միանդամից չավատացին այդ մանի-

Փեստին, բայց նրա մասին լուրն աստիճանաբար սկսեց առաջնավել, և նրանք Ստեֆանովիչից պահանջեցին, վոր նա առաջինը յերդում տա: Ստեֆանովիչն այսպես և պատմում այդ յերդման մասին: «Յես և ընկերս սիրով համաձայնեցինք: Մարդագը սեղան բերին, այն սիրով ծածկեցին, դրին սրբապատկեր և վառեցին մեղրամոմը, չմոռացան նաև խաչաձև յերկու դանակ խրել: Մենք կարգացինք յերդման տեքստը, ստուգված ատամանի տպագիր թերթօվ: Ակներեռեն ամենքը գոհ եյին: «Այժմ յանից մենք մեր աշքերով տեսնում ենք, վոր գուք եւ նույնալիսի դրուժիննեննեո եք. ինչպես և մենք», —հայտարարում եյին մեզ»:

Այլպես հաջողվեց կազմակերպել միքանի հարյուր գյուղացիների : Բայց նախքան վորևե հեղափոխական գործողության ձեռնարկին այս կազմակերպությունը մի մատնիչի միջոցով արագորեն ձերբակալվեց : Կազմակերպության անդամներին քշեցին աքսորաբնակության ու տաժանակիր աշխատանքի :

«Զիդիրինյան գործն» ամենից առաջ ցույց է տալիս պրոլետարական հեղափոխությունից դուրս գյուղացիությանը սոցիալիստական գյուղացիական հեղափոխության հանելու հնարավորության վերաբերյալ նարողնիկական յերազանքների ապարդյունությունն ու անհողությունը։ Շատ կարեոր և նշել, վոր զեմլեվոլականների մեծամասնությունը, Պէտքանովի վկայությամբ, այդ արարքին չառ դրականորեն վերաբերվեց, և նույնիսկ հետազայում նարողնիկան «Վերհան պատճեն» ժուռալու, «Զիդիրինյան գործի» մասին նյութեր զետեղելով, յեզրակացնում եր, թե այստեղ միայն տակտիկական միջալ է յեղել։ Բայց եյության «Վերհան պատճեն»-ն ել չեր հրաժարվում մեկուսացած գյուղացիական սոցիալիստական հեղափոխության հնարավորությանը հավատալուց։ Բանն իհարկե, այն չե, վոր հենց այդ փորձը տապալվեց, այլ այն, վոր «Զիդիրինյան գործն» ակնառու կերպով ցուցադրեց նարողնիկների հայցքների սխալականությունը, իբր թե գյուղացիությունն ամենահեղափոխական գասակարդն ե, թե զյուղացիները՝ բնածին սոցիալիստներ են, թե նրանք մենակ կարող են,

առանց պրոլետարիատի գեկավարության, կատարել և մինչեւ վերը հասցնել հեղափոխությունը:

Հենց այդ հանդամանքները — հիսութափությունը գյուղացիության նկատմամբ և հետո այն, վոր կառավարությունը խստությամբ հետապնդում եր զեմլեվոլականներին նույնիսկ «խաղաղ» պրոպագանդայի համար, — հանդեցրին «Զեմլյա ի վոլյայի» պառակտմանը՝ «Նարոդնայա վոլյայի» և «Չորսի պերեղելի»։ Չերնոպերեղելականներն իրը թէ հավատարիմ մնացին իրենց նախակին գրոշին։

Ծատ բնորոշ ե, վոր Լենինի աշխատություններում,
վորոնց մեջ այնքան չատ ուշադրություն և հատկացվում
տարբեր ուղղությունների նարոդնիկությանը, չերնոպերե-
գելականներին տառացիորեն մի քանի տող և հատկացված:
Զերնոպերեգելականները հարեւանցիորեն հիշատակվում են
«ի՞նչ անել»¹ բրոշյուրի մեջ: Այսուհետեւ «ի. Ֆ. Բեկկերի,
ի. Դիցենի, Ֆ. Ենգելսի, Կ. Մարքսի և ուր. նամակները
Վ. Ա. Զորգեյին և ուր.» գրքի ուսւերեն թարգմանության
առաջարանում հիշատակվում է Մարքսի 1880 թ. նոյեմբերի
5-ի նամակը, վորի մեջ Մարքսը հարձակվում է չերնոպե-
րեգելականների վրա և մերկացնում նրանց անարխիստա-
կան ելությունը:

«Այս պարոնները,—կրում եր Մաքսը,—դեմ են ամեն տեսակի քաղաքական-հեղափոխական յելույթների : Ռուսաստանը, նրանց պլանով, պետք է թոփչը զործի ուղղակի դեպի անարխիստական-կոմունիստական-աթեիստական հաղարամյակ : Խակ այդ թոփչքը միևնույն ժամանակ նրանք պատրաստում են ամենատաղտկալի գոկտրինյորությամբ : Նրանց գոկտրինաների այսպես կոչված սկզբունքներն առ նըլված են հանգուցյալ Բակունինից»² :

Ահա տառացիորեն այն ամենը, ինչ մենք կդառնենք
լենինի յերկերի լիակատար ժողովածուի 30 հատորների
մեջ հատկապես «Զորնի պերեղելի» մասին։ Այդ խումբը
գլխավորապես Հետաքրքիր և նրանով, վոր նրա մեջ մըս-
նում է յին Պլեխանովը, Դեյքը, Ակսելովովը, Զասովիչը, վո-

¹ Աբովյան, Հ. IV, սուս. Հրատ., էջ 464:

² Հենին, հ. XI, սուս. Հրատ., էջ 177:

բոնք հետո կապերը խզեցին նարողնիկության հետ, անցան սոցիալ-դեմոկրատական դիրքերի վրա և կազմեցին «Աշխատանքի ազատագրություն» խումբը:

Նարողնիկների մյուս մասը ստեղծեց «Նարողնայա Վույա» կազմակերպությունը: Նարողնիկների մեծամասնությունը հարեց նարողովականներին, ընդունելով քաղաքական պայքարի ծրագիրը, վորին բացասորեն եյին վերաբերվում թակունիստները: Նարողովականները կանգնեցին ներ դափագրության ուղղու վրա: «Նարողնայա Վույան» ամբողջապես իր ուժերը կենտրոնացրեց ցարիզմի դեմ ուղղված տեսորիստական մենակովի վրա: Նարողովովականներն սկզբում այդ մենակովիվը բացատրում եյին վորպես վրիժառության ակո՛ ցարական կառավարության հետապնդումների դեմ ուղղված: Այս նարողովականները ստիլված յեղան բացատրել, վոր այդ ցարիզմի հետապնդումների դեմ ուղղված ինքնապաշտպանության ակո՛ եր, բայց նրանց ամբողջ պրակտիկան հասցրեց այն բանին, վոր տեսորը փաստորեն դարձավ նարողովականների պայքարի միակ միջոցը: Այդ մարդիկ, վորոնք առաջկա նդուղացիությունը հեղափոխական գլխավոր ուժն եյին համարում Ռուսաստանում, չստեղծեցին մասսայական ենդափոխական վոչ մի կազմակերպություն: Կրախ կրելով գյուղում կատարելիք «սոցիալիստական» հեղափոխության ուսուցիչական ծրագիր ունեցող իրենց «ժողովրդագնացության մեջ», նարողնիկները «վորոշեցին չարունակել պայքարն ընդդեմ ցարական ինքնակալության միմիայն իրենց ուժերով, առանց ժողովրդի, վոր հասցրեց ե՛լ ավելի լուրջ սիրանների»¹:

Անհատական տեսորի նարողովական տակտիկան բոլորում եր նարողնիկության՝ «Հերոսների և ամբոխի» վերաբերյալ թերթիայից, վորն ամենից ավելի լիակատար կերպով արտահայտել ե Ն. Կ. Միխայլովսկին: Բայ նրա «թերթիայի» մասսաները («ամբոխը») պատմությունն իրենք իրենք չեն ստեղծում, այլ այն ստեղծում են «Հերոսները»,

կամ, բայ Լավրովի, «քննադատաբար մտածող անհատները», իսկ մասսաները պատմական պրոցեսներին մասնակցում են այն չափով, ինչ չափով հետեւում են այդ «Հերոսներին», «քննադատաբար մտածող անհատներին»: Փաստորեն նարողովովականները գլխավորապես աշխատանք եյին տանում ինտելիգենցիայի մեջ: Բանվորների և զյուղացիների մեջ տարբող պրոպագանդան հասցված եր մինիմումի, բանակում աշխատանքը բացառապես տարբում եր սպայության մեջ:

Հետագայում՝ մարգսիստների և նարողնիկների միջև յեղած տարածայնությունները բնութագրելով Պլեխանովը կծու կերպով ծաղրում ե «Հերոսների և ամբոխի» թերթիան «Новый защитник сомодержавия, или Горе г. П. Тихомирова» հոդվածում: «Բանվոր գասակարգը, ինչպես նա պատկերանում ե սոցիալ-դեմոկրատին, գոր, հավիտյան շարժուն, անհանդիսա մի ուժ ե, վորը մենակ միայն կարող է այժմ հասարակությունը պրոգրեսիվ ուղիով տանել: Ժողովուրդը, ինչպես նա պատկերանում ե սոցիալիստնարողնիկն, այդ—անձունի, սկահողային մի հոկայե, վորն ընդունակ է հարյուրավոր տարիներ անշարժ մնալ իր տիրահանչակ «հիմքերի» վրա: Մեր իլյա Մուրոմեցի այդ անշարժության մեջ սոցիալիստնարողնիկը տեսնում ե վոչ թե թերթություն, այլ շատ մեծ արժանիք: Նա վոչ միայն չի վշտանում նրանից, այլ պատմությունից միայն մի շնորհ ե իննըրում՝ չտապալել ուսւ հոկային իր այնուամենայնիվ արդեն բավականաչափ նստամաշված հիմքերից, ընդհուպ մինչեւ այն բախտավոր ժամանակը, յերբ նա, բարի սոցիալիստնարողնիկը, հաշիվ մաքրելով կապիտալիզմի, ցարիզմի և այլ վնասակար «ազգեցությունների» հետ, զոհ և փայտուն, կներկայանա իլյա Մուրոմեցին և հարգանքով կզեկուցի: Monsieur est servé! Սեղանը պատրա՞ստ ե: Հոկային մնում է միայն ախորժակ բանալու համար մի շնչով դատարկել կիսայերբորդ գույլանոց գինու թասը և հանգիստ նստել իրեն համար պատրաստած հասարակական սեղանի մոտ...»²:

¹ Համեկ(բ)կ պատմություն: Համառուս դասընթաց, Հայ, Հրատ., էջ 10:

Նարողնիկության անհոգությունը, հեղափոխական մասսայական կազմակերպություն ստեղծելու հնարավորությանը չհավատալը, մասսայական աշխատանքի հանդեպ ցուցաբերված հիմնափությունը—այս ամենը նարողովուլականներին հասցրեց նեղ դժվարական տեսորիստական կազմակերպության, վորն ինքն արդելք հանդիսացավ մասսայական կազմակերպություն ստեղծելու: Ճիշտ է, նարողովովուլականներն այդ կազմակերպության մեջ ներդրավեցին բանվորական միջավայրից լավագույն ժարդկանց: Բայց հենց դրանով ել նարողովականներն իրականում արգելակամ ելիս բանվորական կազմակերպությունների ստեղծումը, վորոնի սկսեցին անկախ նրանցից առաջանալ 70-ական թվականներին:

Այսինչ բանվորական այդ առաջին կազմակերպություններն ամբողջ գլխով բարձր ելին կանդնած նարողնիկներից դավադրական տեսորիստական կազմակերպություններից: Բանվոր դասակարգի մեջ սկսեցին աչքի ընկնել այսպիսի մարդեկի, ինչպես Պյոտր Ալեքսեյևին եւ, վորը «Նարողնայա Վոլյայի» առաջացումից զեռ շատ առաջ նախազուշակում եր, թե բարձրանում ե բանվորի մկանում ձեռքը և սլիններով պաշտպանված ցարական ինքնակալության իշխանությունը հող ու մոխիր կուռնա: Ալեքսեյևը նախատեսում եր, թե ինչպես մոտիկ ապագայում գլուխ կբարձրացնի ցարական ինքնակալության զերեզմանափորը: Այն, ինչ հասկանում եր մանածագործ Պյոտր Ալեքսեյևը, այն, ինչ հասկանում եր Ստեղան Խալտուրինը և ուրիշ առաջավոր նարողնիկ-բանվորներ, —չելին կարող յուրացնել շատ ինտելիգենտ-նարողնիկներ: Նարողովականներին թվում եր, թե հատկապես իրենց կհաջողվի ցարիզմին վերջին, վճռողական հարվածը հասցնել: Նարողովականները դարձան նույն «Ճայթյունների» թեորիան. թեր թե Ռուսաստանում ամեն ինչ պատրաստ է հեղափոխության համար, կյանքի սոցիալիստական վերակառուցմանը խանդարում և միայն ցարական իշխանության սկինը, վորը զեմ և արված ժողովրդի կրծքին: Հարկավոր և հեռացնել այդ ովինը պահող ձեռքը, կտրել այդ ձեռքը—և հեղափոխությունը «կապանքները կարձակի»:

Յար Ալեքսանդր Ա-ի սպանությունը 1881 թ. մարտի 1-ին նարողովուլական շարժման զարդացման բարձրագույն կետն եր, «Նարողնայա Վոլյա» կուսակցության հաջողության բարձրագույն կետը: Բայց 1881 թ. մարտի 1-ը միենույն ժամանակ ցույց տվեց «Նարողնայա Վոլյայի» անզորությունը: Բանն այն չե, վոր «Նարողնայա Վոլյայի» դորձագիր կոմիտեի անդամների մեծամասնությունը ձերակարգեց, այլ բանն այն ե, վոր, յերբ այդ ակտը կատարվեց, բանվորական ու գյուղացիական մասսաները մնացին լուր, անկարելից վոչ թե այն պատճառով, վոր նրանք շահագրգուված չեյին պայքարով, այլ այն պատճառով, վոր նարողովականության ամբողջ թեորիան և պրակտիկան տանում եր դեպի այն, վորպեսի արգելակի այնպիսի կազմակերպության ստեղծումը, վորն ընդունակ լիներ այդ մոմենտին բաղաքականապես և կազմակերպորեն արձագանգել: Նարողովականության ամբողջ թեորիան ու պրակտիկան խանդարում եր ցարիզմի զեմ ուղղված մասսայական հեղափոխական պայքարին:

Բնութագրով նարողովականների տեսորիստական գործունեյությունը և գնահատելով Ալեքսանդր Ա-ի սպանության նշանակությունը, Լենինը շվեյցարական յերթասարդության համար «1905 թվականի հեղափոխության մասին» կարդացած զեկուցման մեջ մատնանշում եր այն, վոր իրենց անմիջական նպատակին՝ «Ծողովզարդական հեղափոխության արթնացմանը՝ նրանք (նարողովականները: —Յե. Յա.) չհասան և չեյին ել կարող հասնել»¹:

Նրանք չստեղծեցին և անհատական տեսորի իրենց տակտիկայի հետևանքով չելին կարող ստեղծել այն կազմակերպությունը, վորը կարողանար Ալեքսանդր Ա-ի սպանության հաջորդ որը պայքարի հանել բանվորների և զյուղացիների մասսաներին: «Նարողնայա Վոլյան», համոզվելով, վոր իր հետևը կանգնած չեն հասպարակական կազմակերպության ամենամասն կարգավորությանը՝ կարողանար ինքնիւ, յերկան թերեց մեծագույն շփորփանություն:

¹ Անդիք, Հ. XIX, սուս. Հրատ., Եջ 348: Բնդիքումն իմն և.—Յա. Յա.:

Յերբ Ալեքսանդր Ա-ի սպանության հաջորդ որը Պետեր-
բուրգի գործարանների բանվորները դիմում ելին «Նարոդ-
նայա Վոլյայի» Գործադիր կոմիտեյի աղաս մնացած ան-
դամներին այն հարցով, թե ինչ պետք է անեն իրենք, —
նարոդովովականները չելին կարողանում նրանց մի վորոշ
պատասխան տալ: Վոչ բանվորական, վոչ զյուդացիական,
վոչ ել գիտօրական միջավայրում նարոդովոլականները
չկարողացան ֆիչ թե շատ նշանակալի խմբեր փոտքի հանել,
վարովինեան մասնակերի մեջ տանելիք պրոպագանդիստական
և կազմակերպական աշխատանքը նենգափոխվեց միայնակ-
ների տեսորդիստական գործունեյությամբ: Մենք դիտենք,
վոր նույնիսկ ոռագմական աշխատանքը տարիում եր բացա-
ռատես սուկավաթիվ, նեղ սպայական խմբակներում:

Այն ժամանակաշրջանի «Նարոդնայա Վոլյայի» փաս-
տաթղթերն առանձնապես ցայտուն կերպով են ընդգծում
«Նարոդնայա Վոլյայի» այդ անզորությունը, այդ անհո-
գությունը, այդ շփոթվածությունը: «Բանվորների կողմից»
թուուցիկում (1881 թ. մարտի 2-ին) նարոդովոլականները
գրում ելին. «Հիշեցե՛ք, յեղբայրներ, վոր տանջողներին
հնապանդպելը ծանր մեղք ե, դրա պատճառով և վիշտ
կրում ամբողջ ժողովուրդը: Բանվոր-յեղբայրնե՛ր: Բայց
կանին տանջվել ե ոռուսական ամբողջ հողը: Հասել ե ժա-
մանակը, յերբ ճշմարտությունը կթաղավորի յերկրի վրա»:

Իսկ ի՞նչ ե Հարկավոր, վորպեսի ճշմարտությունը
թաղավորի յերկրի վրա: Դուրս ե դալիս՝ «Հարկավոր եր
միայն, վոր բանվոր ժողովուրդը համարձակորեն դորձի,
ինչպես դործում ելին Պյոտր Ալեքսեյիվը, Պրեսնյակովը,
Տիվոնովը, Շիրյայիվը, Ուլլադոկին» (Հարկամոցիորեն նկա-
տենք, վոր Ոկտապետին պրովոկատոր եր): «Նարոդնայա Վո-
լյան» հավատացնում եր, վոր յեթե բոլորն այդպես դոր-
ծեն, ապա «այն ժամանակ ամեն ինչ լավ կլինի և ոռուսա-
կան հողի վրա չի լինի վոչ աղքատություն, վոչ ել ար-
տասվալից վիշտ»:

«Նարոդնայա Վոլյա»-ն հեղափոխական մասսայական
պայքարի կոնկրետ վոչ մի կոչ չեր կարող առաջադրել այն
ժամանակ բանվորների առաջ: Մի ուրիշ, 1881 թ. մարտի
3-ի թուուցիկում այդ չափատակը մասսայական պայքարին

յերեան յեկալ ե՛լ ավելի մեծ չափով: «Յարը պետք ե բարի
հոգիվ լինի, —կարդում ենք մենք այդ թուուցիկում, —իւ
հոգին ժողովրդի համար զնող: Ալեքսանդր Ա-ը վայրադ
գայլ եր, և զարհուրելի մահը պատժեց նրան: Թուս բան-
փորնե՛ր: Այժմ դահ ե բարձրանում նոր ցարը՝ Ալեքսանդր
III-ը: Հարկավոր ե, վոր նա չնմանի իր հորը, թող նա
հրավիրի ժողովրդական ընտրյալներ բոլոր գյուղերից, Փար-
բիկաներից և գործարաններից, թող իմանա նա մուժիկի
ցախ ու ժողովրդական կարիքը և հետաղայում թագավորի
ճշմարտությամբ: Թող նրա սենատում ունատորներ լինեն
ժողովրդական ընտրյալները: Այն ժամանակ ցարը մուժիկին
կտա հողը, հարկերը կպակսեցնի և պատառություն կտա
ժողովրդին»:

Յերբ կարդում ես այդ կոչը, ապա դժվարությամբ ես
հագատում, վոր այդ գրել են մարդիկ, վորոնք իրենց հե-
ղափոխականներ և սոցիալիստներ ելին համարում: Թվում
ե, թե այդ քաղվածքներ են ինչ-վոր տերտերական քարոզից,
կարծես թե այդ գրել ե ոպղիցիոնորեն տրամադրված ինչ-
վոր մի յեպիսկոպոս: Այդ թուուցիկի բովանդակությունը
քաղաքական լեզվի թարգմանելով, կարելի յե ասել, վոր
«Նարոդնայա Վոլյա»-ն սահմանադրական-միապետական
պատրանքներ եր սերմանում, իրը թե խոկապես կարող ե
լինել այնպիսի մի բարի ցար Բերենգեյ, վարի մոտ սենա-
տում նստած են «Ժողովրդական» ընտրյալները, և այդ ցարը
մուժիկներին հողեր ե բաժանում, հարկերն ե պակասեց-
նում, ապատություն ե տալիս ժողովրդին և այն: Բանվոր-
ներից պահանջվում եր միայն, վոր նրանք «Եռյլ չտային»,
վորպեսի Ալեքսանդր III-ը, վորը դաստիարակիել եր ցա-
րական ախոռներում և գաժանությամբ գերազանցել եր իր
հորը, Ալեքսանդր II-ին, «չնմանի հորը»: Նարոդովոլական-
ները հնարեցին մի այնպիսի ցար, վորը յերբեք կյանքում չի
յեղել և չեր կարող լինել: Նարոդովոլականները ձգում ելին
ցարից ստանալ միայն սահմանադրական միապետություն:

Առաջ անցնելով, հարկ ե հիշեցնել, վոր 1905 թ. այդ
լիբերալ-նարոդների սերունդները՝ սոցիալիստ-հեղափո-
խականներն Ուրախում «Ի՞նչպիսի ցար ե մեղ հարկավոր»
վերնագրով մի թուուցիկ լույս ընծայեցին: Այդ թուուցիկում

խոսկում եր այն մասին, թե «մեզ» հարկավոր ե մի բարի ցար, վորը հոգ տաներ ժողովրդի մասին, իսկ վորովհետեւ իր թե Նիկոլայ Ա-ը հոգ չի տանում ժողովրդի մասին, ապա նա մեզ պետք չի: Քառորդ դար անց, նարոդնիկ-եսերները կրկնում եյին նույն այն մտքերը, ինչ մտքերը վոր ունեցին նարոդնիկները 1881 թվին, յերբ նրանք զգում եյին, վոր իրենի վոչ մի հենարան չունեն: Ճիշտ է, 1881 թ. ոգոստոսի 24-ի «Ռուս բանվոր ժողովրդին» թուղթիկում արդեն կա նաև բանվորներին ուղղված կոչ՝ զենք ձեռք բերելու և... սպասելու: «...Հենց վոր մենք կոկոնք բունտը, հասեր մեզ ոգնության, Գործադիր կոմիտեն վազորոք ձեզ կտեղեկացնի, իսկ դուք յեղեք պատրաստ»: Բայց այստեղ ել, այս կոչի մեջ, բանվոր դասակարգին «ոժանդակ գեր և հատկացիում: Գործադիր կոմիտեն ամեն ինչ ինքը կանի, բանվոր դասակարգին հարկավոր ե միայն կարճակերպիլ ու խմբակներ կազմել», բանվոր դասակարգի վոչ մի կուսակցություն հարկավոր չե ստեղծել: Այն ժամանակվա «Նարություն հարկավոր չե ստեղծել: Այն ժամանակվա «Նարությունայա Վոլյա»-ի փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց ե տալիս, վոր ուսու հասարակության դեմոկրատական մյուս տարրերի վերաբերմամբ ել նարոդովոլականները չկարողացան ներդաշնակ մի ծրագիր, գործուն լողունդներ առաջարկել: «Դոնի, Ուրալի, Որենբուրգի, Կուրանի, Տերեկի, Աստրախանի, Սիբիրի և այլ մարզերի փաստապահն կազակային զորքերին» ուղղված կանչի մեջ պարունակվում են նույն այդ անդոր կոչերը:

Թերես նարոդովոլականները բոցավառ կոչի խոկական խոսքեր գտան, յերբ դիմում եյին զյուղացիներին, այդ չիմնական ուժին, վորի վրա հույս եր դնում նարոդնիկութունը: Սակայն «Աղնիվ աշխարհականներին, ուղղափառ (!) գյուղացիներին և ուսուական ամբողջ ժողովրդին» ուղղած կոչն ել հանդիսանում ե նույնպիսի անողնական, անդած կոչն ել հանդիսանում ե նույնպիսի անողնական, անդած կոչն ել հանդիսանում ե նույնպիսի անողնական, անդած կոչն ել հանդիսանում ե նույնպիսի անողնական: Մեծ մեղք ե ընկնում նաև նրա խորհրդականների, մինիստրների և սենատորների վրա. նրանք շրջապատել են ցարին և թույլ չեն տալիս, վոր նրան հասնեն մուժիկի արտասուքները: Այժմ

դահ ե բարձրանում նոր ցարը, Ալեքսանդր III-ը: Նա պետք ե քաղի իր հոր մեղքը և թեթևացնի ժողովրդական անտառնելի լուծը: Աւղղափառ զյուղացիները: Ամբողջ համայնքով խնդիր մատուցեք թագավորին, խնդրաբկուներ ուղարկեցեք նրա մոտ, անկեղծորեն պատմեցեք թագավորին, թե ինչպես թուղթայում մուժիկն ուժապատ ե լինում, ավելի վատ, քան թաթարական գերության ժամանակ: Հավաքվեցեք ամբողջ համայնքով և խնդրագրեք գրեցեք: Այսպիսի խնդիրներ. 1) թող թաղավորը հրաժայի նոր հողաբաժինները, առանց վորեն փրկագնի. 2) թող պակասեցնի հարկերը. 3) թող համայնքի զործերին չխանավեն վոչ չինովնիկները, վոչ ել վոստիկանությունը. 4) թող թագավորը խորհրդի և ցուցումի համար սենատ հրամայի համայնքի ընտրյալ մարդկանց գյուղերից և ամբողջ ժողովրդից, վորպեսզի այսուհետեւ թագավորի խորհրդականները լինեն վոչ թե տերերը, այլ գյուղացիները և թող առանց այդ ընտրյալների խորհրդի ցարը վոչինչ չանի—վոչ հարկեր նշանակի, վոչ պատերազմներ վարի: Աւղղափառները: Յերբ ցարը հարգի մեր այս խնդիրները, չշմարտությունը կփայլի յերերի վրա, կանհետանա ստությունն ու ցավը»:

Այսուեկ ել զարձյալ տերաբական այս քաղցրավուն տոնը ցարի հոգու վրա և խորհրդականների, մինիստրների ու սենատորների հոգու վրա ծանրացած մեղքին նկատմամբ: Ամբողջ գժրախտությունը, բանից գուրս ե գալիս, այն ե, վոր չինովնիկները թույլ չեն տալիս, վոր մուժիկի արտասուքները հասնեն ցարին: Յեկ զարձյալ գյուղացիներին ներշնչվում ե, թե կարող ե լինել այնպիսի մի բարի ցար Բերենդի, վորը թե՛ հողը կտա առանց փրկագնի, թե՛ հարկերը կպակասեցնի և թե այնպես կանի, վոր չինեն վոչ չինովնիկները, վոչ վոստիկանությունը, և վոչինչ չի անի աղնիվ աշխարհականների և ուղղափառ գյուղացիների համաձայնության: Վոչ մի ակնարկ ցարիցի կողմէց ճնշված աշխատավոր մասսաների ազգային ուղղագներն ովտագործելու փորձեր անելու նկատմամբ—կոչն ուղղված է միայն ուղղափառներին, այսինքն, ուուներին: Փոխանակ ե միայն ուղղափառներին, այսինքն, ուուներին: Փոխանակ կոչ անելու բանվորների հետ ձեռք ձեռքի տված ապատամբ-

վելու, դյուղացիներին հանձնարարվում ե խնդիրներ դըել և
սպասել, թէ յերբ ցարը «կհարդի» այդ խնդիրները։ Այն
ժամանակ, նարոդնիկների խոսքերով, «ճշմարտությունը
կփայլի յերկրի վրա, կանհետանա ստությունն ու ցավը»։

Դժվար և հնարել ավելի անուժ, քաղաքականորեն վնա-
սակար մի բան, բան այդ կոչե՛րը։ Բայց Հենց նրանք ել
քնդզում են, թէ «Նարոդնայա Վոլյայի» տեսորդիզմի
տակտիկան տակտիկա յեր մի կուսակցության, վարք հե-
նարան չուներ բանվորների և զյուղացիների հեղափոխա-
կանացող մասսաների մեջ։ Հուսահատության, անհուսալի-
ության և անգործության այդ զգացումները քելադրեցին
«Նարոդնայա Վոլյայի»-ի Գործադիր Կոմիտեյի մնացորդնե-
րին նրանց նամակ-դիմումը՝ ուղղված ցար Ալեքսանդր
III-ին, վորի մեջ նրանք գրում եյին։

«Կամ հեղափոխություն, վորը միանդամայն անխուսա-
վելի յե, վորը չի կարելի կանխել վոչ մի մահապատճով,
կամ գերազույն իշխանության կամրջին դիմում ժողովը-
գին։ Հարազատ յերկրի շահերի համար, ուժերի անողուտ
կործանումից խուսափելու համար, այն սոսկալի աղետնե-
րից խուսափելու համար, վորոնք միշտ ուղեկցում են հե-
ղափոխությանը, Գործադիր Կոմիտեն դիմում և ձերդ մե-
ծությանը՝ խորհուրդ տալով ընտրելու յերկրորդ ուղին։
Հավատացեք, Հենց վոր գերազույն իշխանությունը կդա-
դարի կամայական լինելուց, Հենց վոր նա հաստատողեն կվճռի իրականացնել-միայն ժողովրդական դիտակցության
և խղճի պահանջները, — ուուք համարձակութեն կարող եք
վոնդել կառավարությանը խայտառակող լրտեսներին, պա-
հականամբերին ուղարկել զորանոցները և այրել ժողովրդին
անբարոյականացնող կախաղանները… Այսպես ուրեմն,
ձերդ մեծություն, վճռեցե՛ք։ Ձեր առաջ յերկու ուղի կա։
Զեղանից ե կախված ընտրությունը։ Իսկ մենք կարող ենք
միայն խնդրել ճակատագրին, վորպեսզի ձեր բանականու-
թյունն ու խիզը թելադրեն ձեզ մի վորոշում, միակ հա-
մալատառխանը միուսաստանի բարորությանը, ձեր սեփա-
կան արժանագործությանն ու պարտավորություններին հա-
րազատ յերկրի հանդեպ»։

Այսպես եր վրում «Եաբողնայա Վոլյայի» Գործադիր
կոմիտեն Ալեքսանդր Ա ցարին, իր վրա վերցնելով ցարի
խորհրդականի դերը, թե նա ինչպես խուսափի հեղափոխու-
թյունից։ Խնամքով կոծկված, սքողված և Սահմանադիր
ժողովի պահանջը, լիակատար հրաժարում «Եաբողնայա
Վոլյայի» ծրագրից, վոչ մի խոսք դյուղացիական պա-
հանջների մասին, վոչ մի խոսք բանվորների մասին։ «Եա-
բողնայա Վոլյայի» Գործադիր կոմիտեն բանակցություն-
ների մեջ մտավ Ալեքսանդր Ա-ի ազնվականական-կարլա-
ծատիրական կառավարության հետ։ Այդպիսի քաղաքակա-
նության տակ, իհարկե, կարող եր ստորագրել յուրաքան-
չյուր լիբերալ, իսկ նրանք քիչ չեյին նարոդնիկական կաղ-
մակերպության մեջ։ Ենդեւս իր ժամանակին ծաղրել և
խոպանիայի բակունիստներին, վորոնք, բացառելով քաղա-
քականության մեջ մասնակցելու անհրաժեշտությունը, գլոր-
վեցին գեղելի ամենից ցածրահարգ պրլիտիկանություն։
70-ական թվականների նարոդնիկները, բացասելով քաղաքա-
կան պայքարի անհրաժեշտությունը, հանդեցին նույն բա-
նին Հենց այն մոմենտին, յերբ նրանք իրենց տեսորիստա-
կան գործունելության մեջ ամենաբարձր հաջողություննե-
րի հասան։

Յարիզմի կողմից «Եաբողնայա Վոլյայի» ջախջախու-
մից հետո վրա հասավ խորագույն ռեալիզմայի ժամանակա-
շրջան։ Բայց, ինչպես շատ հաճախ լինում է, խորագույն
ռեալիզմայի ժամանակաշրջաններում հասունանում ե հա-
սարակական նոր միտք։ Հետագայում լենինը գրում եր,
թէ «...միուսաստանում չի յեղել մի գարաշրջան, վորի մա-
սին կարելի լիներ այն աստիճան ասել՝ թէ «Որ հասավ
մտքի և բանականության հերթը», ինչպիս Ալեքսանդր Ա-ի
գարաշրջանի՝ մասին... Այո, մենք, հեղափոխականներս,
հեռու լենք ռեալիզիսն ժամանակաշրջանների հեղափոխական
դերը ժիանելու մտքից։ Մենք գիտենք, վոր հասարակական
շարժման ձեզ փոխվում ե, վոր ժողովրդական մասսաների
քաղաքական անմիջական ստեղծագործության ժամանակա-
շրջանները պատճության մեջ փոխարինվում են այնպիսի
ժամանակաշրջաններով, յերբ արտաքին հանդուժություն և

թագավորում, յերբ ծեծկված և տաժանակիր աշխատանքից ու կարիքից ճնշված մասաները լուռ են կամ քնած են (ըստ յերեսութին, քնած են), յերբ առանձնապես արագորեն հեղափոխականանում են արտադրության յեղանակները, յերբ մարդկային բանականության առաջավոր ներկայացուցիչների միտքը տալիս և անցյալի հանրագումարները, կառուցում ե հետազոտության նոր սիստեմներ և նոր մեթոդներ։ Ահա, չե վոր Յեվրոպայումն ել 1848 թվականի հեղափոխության ճնշումից հետո յեկած ժամանակաշրջանը աչքի յեր ընկնում տնտեսական չափում պրոգրեսով և մտքի աշխատանքով, վորը ստեղծեց թեկուզ հենց Մարքսի «Կապիտալը»։ Մի խոսքով, «մտքի և բանականության հերթը» յերբեմն վրա յե հասնում մարդկության պատմական ժամանակաշրջաններում ճիշտ այնպես, ինչպես քաղաքական գործչի գտնվելը բանտում նպաստում ե նրա գիտական աշխատանքներին և զբաղմունքներին»¹։

Թեակցիայի այդ ժամանակաշրջանում նարողնիկության թեորիայի և պրակտիկայի քննադատության հիման վրա, պայքարի նարողնիկական մեթոդների քննադատության հիման վրա 1883 թ. ծնվեց առաջին մարքսիստական կազմակերպությունը՝ «Աշխատանքի աղատակրություն» խումբը։ Գ. Վ. Պլեխանովը և նրա «Աշխատանքի աղատագրություն» խումբը 80-ական թվականներին վճռական հարված հասցըրին նարողնիկությանը։ «Աշխատանքի աղատագրություն» խումբը նարողնիկության գեմ մզած պայքարում «մեծ աշխատանք կատարեց մարքսիզմը Ռուսաստանում տարածելու գործում», թեորիապես հիմնադրեց սոցիալ-դեմոկրատիան և առօդին քայլն արեց գեղի բանվորական շարժումը»²։ 90-ական թվականներին գասակարգային պայքարի ասպարեզի վրա հանդես ե դալիս մարդկության մեծագույն մտածողը, պրոլետարական կուսակցության, պրոլետարական հե-

զափոխության ստեղծողը—Վլադիմիր Իլյիչ Լենինը, վորը «90-ական թվականներին ավարտեց նարողնիկության դադարաբական ջախջախումը, վերջնականապես ջախջախեց նարողնիկությունը»¹։ Առաջինները, ովքեր խիստ քննադատության յենթարկեցին նարողնիկների հայացքները, Մարքսն ու Ենգելսն ելին։

¹ Անդիք, Պобеда կադետում և զանազան աշխատանքում, Յերկ., 4. IX, ուսու. Հրատ., Էջ 127։

² Համեկ(բ)կ պատմություն։ Համառոտ դասընթաց, Հայ. Հրատ., Էջ 34։

¹ Համեկ(բ)կ պատմություն։ Համառոտ դասընթաց, Հայ. Հրատ., Էջ 34։

IV. ՄԱՐՔՍԻ ՈՒ ԵՆԳԵԼՍԸ ՆԱՐՈԴՆԻԿՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՔՆՆԱԴԱՏՆԵՐՆ ԵՆ

Մարքսիզմը—դիտուական սոցիալիզմը—յերեան յեկավանցյալ դարի կեսերին վորպես պրոլետարիատի հեղափոխական ուսմունք, վորպես ուսմունք պրոլետարական դիկտատուրայի մասին։ Մարքսիզմի հիմնական դրույթները ձևակերպվեցին 1848 թ. հեղափոխության նախորյակին։ Հենց այն ժամանակ Մարքսն ու Ենդելսը բանվորական մասսաների մեջ նետեցին իրենց բոցավառ կազմակերպող լրգունդը՝ «Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք»։ Պրոլետարիատն այն ժամանակ ինքնուրույն կուսակցության մեջ դեռ կազմակերպված չեր։ Նա նոր սկսում եր դիտակցել իր դասակարգային ինդերները և հանդես դալ ինքնուրույն քաղաքական պահանջներով, իր քաղաքական ծրագրով։ Բանվորական կուսակցության այդ առաջին ծրագիրը «Կոմունիստական կուսակցության մանիֆեստն» եր, վորը դրել են Մարքսն ու Ենդելսը վորպես միջազգային առաջին բանվորական կազմակերպության՝ «Կոմունիստների միության» ծրագիր։

1848 թ. հեղափոխությունը Գերմանիայում, Ավստրիայում և ուրիշ յերկրներում ճնշվեց, և այդ հեղափոխության ճնշման մեջ հակայական դեր խաղաց ուսուական ցարիզմը։ Ռուսական ցարիզմը՝ «միջազգային ժանրաբմ» եր։ Նրա ողնությամբ բազմից ճնշվել ե հեղափոխական շարժումը Յելրոպայում։ Ռուսական ցարն ողնեց ջախջախել Ավստրո-Հունգարիայի 1849 թ. հեղափոխությունը, ուղարկելով իր զորքերն այնտեղ։ Հենց այն պատճառով, վոր ցարիզմն այդպիսի դեր եր խաղում և հեղափոխության դեմ դուրս բերված այդպիսի ահեղ ուժ եր ներկայացնում, Մարքսն ու Ենդելսը մհծագույն ուշադրությամբ եյին վերաբերված այն ամենին, ինչ տեղի յեր ունենում Ռուսաստանում։ Նրանք ուշադրիր ուսումնասիրում եյին Ռուսաս-

տանի հասարակական կյանքի գեպքերը և առանձին համակրանքով եյին ընդունում ամեն մի լուր Ռուսաստանում տեղի ունեցող հեղափոխական շարժման մասին։

Այն ժամանակի—վոչ միայն 40-ական թվականներին, այլև ավելի ուշ—Մարքսի և Ենդելսի պրոլետարական ուսմունքը դեռ տիրապետողը չեր Յելրոպայում։ Այնտեղ ուժեղ ազգեցություն ուներ մանր-բուրժուական ուտոպիական սոցիալիզմի և տրեղ-յունիոնիզմի ուսմունքը, Սեն-Սեբաստիոնի, Ֆուլյեյի, Կարեյի, Ռուենի ուսմունքները, տարածվում եյին Բակունինի, Պրուդոնի և Լասալի իդեաները։

Մարքսը, «Կոմունիստական կուսակցության մանիֆեստի» մեջ ձևակերպելով պրոլետարական ծրագրի հիմնական դրույթները, մատնանշում եր, վոր պրոլետարիատը հարկադրված է պայքարել մի ամբողջ շարք ուսմունքների դեմ, վորոնք աշխատում են զգեստագործել սոցիալիզմի հաղուստով։ Կապիտալիզմի ճնշումն այնքան ուժեղ եր և կապիտալիստական հասարակությունը վերափոխելու մասսաների ձգտումն այնքան մեծ, վոր նույնիսկ ուեակցիոներները փորձում եյին սոցիալիզմի գիմակ առնել իրենց յերեսին։ Յեզ Մարքսը «Կոմունիստական կուսակցության մանիֆեստի» մեջ թվարկում է «սոցիալիզմի» այսպիսի տեսակները։ Փեոդալական սոցիալիզմ, մանր-բուրժուական սոցիալիզմ, գերմանական, կամ «հակական», սոցիալիզմ, կոնսերվատիվ կամ բուրժուական սոցիալիզմ և, վերջապես, քննադատական-ուսուողիական սոցիալիզմ։ Մարքսն ստիպված եր ուժեղացրած պայքար մղել նաև անարիխական ուսմունքի դեմ, վորը շատ բան եր փոխ առել ուտոպիական սոցիալիզմից։ Իր «Փիլիսոփայության թշվառություն» գրքում Մարքսը փայլուն կերպով հայտաբերեց Պրուդոնի ուսմունքի մանր-բուրժուական եյությունը։ Հետագայում ուսուանադատիստ Բակունինը զարգացրեց Պրուդոնի թեորիաները և փորձում եր այդ ուսմունքն ու իր կազմակերպությունը, վորը շատ ուժեղ կերպով համակված եր նարոգնիկական իդեաներով, հակադրել Մարքսի կազմակերպած և ղեկաված կամաց 1 ինտերնացիոնալին։ Մարքսն ի ինտերնացիոնալում մահացու հարված հասցրեց Բակունինի անարիխիզմին, վորը

փորձում եր քայլայի պրոլետարիատի միջազգային կազմակերպությունը։ Արդեն այդ ժամանակաշրջանում պարզուց նշվեց մի կողմից Մարքսի ու Ենդելսի գիտական պրոլետարական սոցիալիզմի և մյուս կողմից նարոգնիկներ Բակունինի, Լավրովի, Տկաչեվի նարոգնիկական, մանրուրժուական, ուստուպիական, «գյուղացիական» սոցիալիզմի անհաշտելիությունը։

Այսպիսով, մարքսիզմը, նախքան վորովես միակ գիտական հեղափոխական թեորիա ճանաչվելը, ստիրիած եր իրեն համար ճանապարհ հարթել հակապրոլետարական ամեն տեսակի ուսմունքների թանձրության միջով։ Ռուսաստանում, վորը յեվրոպական յերկրներից ավելի ուշ վորք դրեց կաղիտալիզմի ուղղու վրա, առանձնապես բարենպատճող կար մանր-բուրժուական ուստուպիական այն սոցիալիզմի իդեաների տարածման համար, վորը կնիք գրեց թե՛ 40-ական, թե՛ 50-ական թվականների և թե հետագա տառնամյակների առաջարկոր մարդկանց մտածողության վրա, ընդհուպ մինչև առաջին մարքսիստական կազմակերպությունների կարգումը Ռուսաստանում։ Այսպիսի խմբերի իդեոլոգիան, ինչպես են պետրաշեվականները, կարսկողովականները, նեչայեվականները, գեմբեվոլականները, նաւողովականները, չերնոպերեղելականները, այս կամ այն աստիճան համակված եյին մանր-բուրժուական ուստուպիական սոցիալիզմի տարբերով, վորը Ռուսաստանի առանձնահատուկ պայմաններում, վորեղ գերազանց եր գյուղացիական բնակչությունը, ընդունեց գյուղացիական ուստուպիական սոցիալիզմի բնույթ։

Մանր-բուրժուական գյուղացիական ուստուպիական սոցիալիզմի իդեաները տարածված եյին վոչ միայն Ռուսաստանում, այլև մի շարք ուրիշ՝ գերակշռող գյուղացիական բնակչություն ունեցող յերկրներում։ Ֆրանսիայում, Իսպանիայում, Իտալիայում։ Լենինը «Մանր-բուրժուական և պրոլետարական սոցիալիզմ» հոգվածում, վորը գրել է 1905 թ., այսպես և բացատրում Ռուսաստանում և ուրիշ յերկրներում ուստուպիական սոցիալիզմի տարածման պատճառը։

«Յեվրոպայում սոցիալիզմի տարբեր ուսմունքների մեջ ներկայումս լիակատար տիրապետություն ե ձեռք բերել մարքսիզմը, իսկ սոցիալիստական հասարակակարգի իրագործման համար պայքարը ամբողջովովին մղվում ե վորպես սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների ղեկավարած բանկոր գասակարգի պայքար։ Սակայն մարքսիզմի ուսմունքի վրա հիմնվող պրոլետարական սոցիալիզմի այդ լիակատար տիրապետությունը միանգամից չամրացավ, այլ միայն յերկար պայքարից հետո ամեն տեսակ հետամնաց ուսմունքների դեմ, մանր-բուրժուական սոցիալիզմի դեմ, անարխիզմի դեմ և այլն։ Ընդամենը մի յերեսուն տարի առաջ մարքսիզմը գեռ տիրապետող չեր նույնիսկ Գերմանիայում, վորտեղ գերակշռում եյին, իսկապես ասած, մանր-բուրժուական և պրոլետարական սոցիալիզմի միջև գոյություն ունեցող անցողիկ, խառը, եկեղեկտիկ աշխարհայացքները։ Իսկ ոռմանական յերկրներում, Ֆրանսիայում, իսպանիայում, Բելգիայում, առաջարկոր բանվորների մեջ ամենատարածված ուսմունքներն եյին պրուդոնիզմը, բլանկիզմը, անարխիզմը, վորոնք ակնհայտորեն մանր բուրժուայի և վոչ թե պրոլետարի տեսակետն եյին արտահայտում։

Ռուսաստանի հետամնացությունը բնականարար բացառում և սոցիալիզմի զանազան հետամնաց ուսմունքների մեծ կայունությունը մեր յերկրում։ Ռուսական հեղափոխական մաքի վերջին քառորդ դարի ամբողջ պատմությունը մարքսիզմի մանր-բուրժուական նարօգնիկական սոցիալիզմի դեմ մղած պայքարի պատմությունն ե։¹

Լենինն ամենայն խորությամբ հայտարերեց Ռուսաստանում նարօգնիկական ուսմունիքի տարածման գլխավոր պատճառը։ Այդ գլխավոր պատճառը Ռուսաստանի կապիտալիստական հարաբերությունների քուլությունն ու անգարգացածությունն եր և, հետևաբար, պրոլետարիատի բուրժուայի։

Ահա թե ինչու մարքսիզմի յերկալը Ռուսաստանում

¹ Լենին, Մանր-բուրժուական և պրոլետարական սոցիալիզմ, Յերկ., հ. VIII, Հայ., Հրատ., եջ 512—518։

ուղեկցվում եր ամենից առաջ նարողնիկների այդ ուսուպի-
ական գյուղացիական սոցիալիզմի դեմ ուղղված վճռական
պայքարով։

Հարկավոր ե նշել, վոր Կ. Մարքսի և Ֆ. Ենդելսի յեր-
կերի տարածումը Ռուսաստանում համեմատաբար վաղ
սկզբեց : «Կապիտալի» առաջին հատորը ուղարկելու թարգման-
վեց ավելի առաջ, քան ուրիշ լեզուներով : Արդեն 1868 թ.
սկզբել եր «Կապիտալի» ուղարկելու թարգմանությունը :
1871 թ. լույս տեսավ՝ «Կոմունիստական կուսակցության
մանիֆեստի» ուղարկելու առաջին թարգմանությունը։

1870 թ. մարտին ժնեվում Ռւտինը, Տրուսովը և Դմի-
տրիեվան (վորը Փարիզյան կոմունայի ժամանակի Փարի-
զումն եր վորպես Մարքսի թղթակցուհի) կազմեցին I ին-
տերնացիոնալի Ռուսական սեկցիան : Այդ սեկցիան կազմա-
կերպվեց ի հակալչիս բակունինյան սեկցիայի, վորը պայ-
քարում եր Մարքսի դեմ : I ինտերնացիոնալի Ռուսական
սեկցիան դիմեց Մարքսին, խնդրելով իր վրա վերցնել ներ-
կայացուցչությունը I ինտերնացիոնալի Գլխավոր Խորհր-
դում : Մարքսը, վորը ուղարկելու մեջ փնտում եր
դարձիկ, վորոնք մոտ լինելին իր հայացքներին և կարողա-
նային մարքսիդի տարածողները հանդիսանալ Ռուսաստա-
նում, սիրով համաձայնեց այդ ներկայացուցչությանը և
1870 թ. մարտի 22-ին ձեւակերպեց Ռուսական սեկցիայի
ժողովը Բանվորների միջազգային ընկերության մեջ։

Մարքսն ոգնեց սեկցիային կազմակերպելու «Հարօնօ^ւ
ծելո» ժուռնալը և ամեն կերպ աջակցում եր ուղարկու-
թականների այդ խմբին : Մարքսն ու Ենդելսն ահազին նշա-
նակություն ելին տալիս հեղափոխական շարժման զարգաց-
մանը Ռուսաստանում, նրանք չափազանց կարևոր ելին հա-
մարում ստեղծել ուղարկությունը կարելու և վոր-
քիկ կորիզ, վորոնք կանգնած են դիտական սոցիալիդի-
տեսակետի վրա կամ, համենայն դեպս, թեկուղ և պայքա-
րում են նարողնիկական, բակունինյան, անարխիստական
վիասակար թեորիաների դեմ։

Մարքսն ու Ենդելսն ամեն կերպ պաշտպանում ելին
ուղարկան ցարիզմի դեմ ուղղված հեղափոխական շարժման
ուղարկությունը Ռուսաստանում : Նրանք համակրում ելին յու-
ղարգացումը Ռուսաստանում : Մոտիվայի Մարքսի—Ենդելսի—Լենինի Ինստի-
տուտում դտնվում են մեծ թվով ուղարկելուն գրքեր Մարքսի

բարքանչյուր մի քայլի, վորն ուղղված եր ցարիզմը ջախջա-
խելու համար, համակրում ելին այն բանին, ինչ լենինը
անվանում եր ուղարկութական ուղղությունների մար-
տական դեմոկրատիզմ : Բայց դրա հետ մեխանի նրանք վոչ
միայն կողմնակից չելին նարողնիկների իդեաներին, այլ
նրանց դեմ խիստ և վնասական պայքար ելին մրում : Այդ
պայքարն ուղղված եր վոչ միայն Գերցենի և Բակունինի
դեմ—նրանք խստորեն քննադատում ելին նաև նարողնիկու-
թյան մյուս հիմնադիրներին—Տկաչևին և Լավրովին :

Մարքսն ու Ենդելսը խիստ քննադատության յենթար-
կեցին նարողնիկների կեղծ-զիտական «Թեսորիան», հայտա-
բերեցին նարողնիկների սխալ գրույթները Ռուսաստանի
առանձնահատուկ, մյուս յերկրներից տարբեր զարգացման
մասին, կապիտալիզմի դեմ յեղող «ամենափրկարար» մի-
ջոցի՝ գյուղացիական համայնքի մասին, այն մասին, իբր
թե ագրարայի մարդը Ռուսաստանում գյուղացին և, և վոչ
թե բանվորը :

Մարքսն ու Ենդելսն իրենց փայլուն հետազոտություն-
ների մեջ ցույց տվին, թե վորքան խորապես անձիւտ և
վնասակար են նարողնիկական հայացքները, իբր թե իշխա-
նության նվազման հարցը Ռուսաստանում դրված և վոչ
այնպես ուրիշ յերկրներում, իբր թե ուղարկան
ինքնակալությունը չի պահպան տիրապետող դասակար-
գերի ուժով, այլ պահպան և մերկ սպինի ուժով, իբր թե
Ռուսաստանում հնարավոր և սոցիալիստական գյուղացիա-
կան հեղափոխություն։ Նարողնիկների բոլոր վնասակար,
սխալ գրույթների դեմ ամբողջ ուժով վուտքի յելան Մարքսն
ու Ենդելսը :

Ռուսական իրականության հետ ավելի լավ ծանոթանա-
լու համար, ուղարկությունը գործերի կուրսի մեջ լինելու
համար, Մարքսը տիրապետեց ուղարկելու լեզվին։ Նա բնա-
գիրներով ուղարկությունը եր Զերնիշելվուկու յերկերը և հե-
ղափոխական այն բոլոր փաստաթղթերը, վորոնք լուսա-
բանում են հեղափոխական շարժումը Ռուսաստանում, բնա-
գիրներով ուղարկությունը եր նաև աղբարային հարցը Ռու-
սաստանում։ Մոտիվայի Մարքսի—Ենդելսի—Լենինի Ինստի-
տուտում դտնվում են մեծ թվով ուղարկելուն գրքեր Մարքսի

գրադարանից, վորոնցից Մարքսն ու Ենդելսն ոպտվում եյին: Մարքսի և Ենդելսի նամակագրությունից, նրանց հոգկածներից, կարգացած գրքերի լուսանցքներում արված նրանց գիտողություններից (հաճախ այդ գիտողություններն արված են ոռւսերեն) յերեսում ե, թէ ինչպիսի ուշադրությամբ Մարքսն ու Ենդելսը ծանօթանում եյին Ռուսաստանի գործերի գրության հետ:

Մարքսն ու Ենդելսը խիստ քննադատում եյին Պյոտր Լավրովի սիսալ թեորիաները: Այսպիս, 1874 թ. հոկտեմբերի 6-ի «Ֆոլկաշաատում» գետեղված հոգվածում Ենդելսը ծաղրում ե նարողնիկ լավրովի փելիսովայական եկլեկտիզմը (հայացքների շիլավիլավ):

«Պյոտր բարեկամս իր փելիսովայության մեջ եկլեկտիկ ե հանդիսանում, վորը բոլոր տարբեր սիստեմներից և թեորիաներից աշխատում ե ընտրել այն, ինչ նրանց մեջ ամենալավն ե: «Փորձեցեք բոլորը և ամենալավը պահպանեցեք»: Նա գիտե, վոր ամեն ինչի մեջ կա իր վատ և իր լավ կողմը և վոր լավ կողմը պետք ե յուրացվի, իսկ վատը՝ չենացվի: Իսկ վորովհետեւ ամեն մի իր, ամեն մի անձնավորություն, ամեն մի թեորիա ունի այդ յերկու կողմերը՝ լավն ու վատը, ապա ամեն մի իր, ամեն մի անձնավորություն, ամեն մի թեորիա այդ տեսակետից ներկայանում ե մոտավորապես նույնքան վատ և նույնքան լավ, ինչպես և յուրաքանչյուր ուրիշը»:

Անհրաժեշտ ե այստեղ նշել, վոր կողմնակից չենդելով Բակունինի տակառիկային, Լավրովը զդատապարտեց նրա պառակտողական, կազմալուծչական գիծը I ինտերնացիոնալում:

Չատ ուշադրություն հատկացրեց Ենդելսը Բակունինի, Նեչայելի և Տկաչենի քննադատությանը: Վերջինս 70-ականն թվականների չատ ուրիշ նարողնիկներից տարբերվում եր նրանով, վոր նա այն ժամանակ կողմնակից եր իշխանությունը ինտելիգենցիայի փոքրաթիվ խմբի կազմակերպած դավագրության միջոցով զավթելուն: Նա քարոզում եր դավագրական տակառիկա, զնում եր իշխանության նվաճման հարցը վորպես զավադիր-բլանկիստ, չհենվելով իշխանության համար մղած պայքարում բանվորական և գյուղա-

ցիական լայն մասսաների վրա: Զափաղանց հետաքրքիր և Տկաչենի հայացքների քննադատությունն Ենդելսի «Ռուսաստանի հասարակական հարաբերությունների մասին» հոդվածում, վորը տպագրվել է «Փոլկաշտաբատ» ժուռնալում 1875 թվին ի պատասխան «Պ. Տկաչենի բաց նամակին Թրիգրիս Ենդելսի անունով»:

Ենդելսին ուղղած իր նամակում Տկաչենը փորձում էր ապացուցել, վոր Ենդելսը վոչինչ չի հասկանում Ռուսաստանի քաղաքական անցքերից: Այդ նամակում Տկաչենը, շաբարելով իր հայացքն իշխանության նվաճման հարցի մասին, պնդում եր. «Մեզ մոտ (Ռուսաստանում:—Յե. Յա.) չկա քաղաքային պլուետարքատ... մեղ մոտ չկա նաև բուրժուազիա... Մեր բանվորները պետք ե պայքարեն միայն բաղակական իշխանության դեմ: Կապիտալի իշխանությունը մեղ մոտ դեռ սազմային գրության մեջ ե: Իսկ ձեզ, վողորմած տյարք, անհայտ չե, վոր պայքարն առաջինի դեմ անհամեմատ ավելի հետ ե, քան պայքարը վերջինի դեմ»¹:

Տկաչենը հավատացնում եր, թէ ուուսական ինքնակալությունը «միայն հեռվից ե ուժ թվում... նա ժողովրդի տնտեսական կյանքի մեջ չունի վոչ մի արմատ, նա իր մեջ չի մարմնալորում վոչ մի գասի շահերը... Զեղ մոտ պետությունը, —զբում եր Տկաչենը Ենդելսին, —բնավ ել յերեկայական ուժ չի: Նա յերկու վատով ել հենվում ե կապիտալի վրա: Նա իր մեջ (!!) մարմնավորում ե տնտեսական վորոշ շահեր... Մեղ մոտ այդ տեսակետից զործը ճիշտ հակառակ զբության մեջ ե. մեր հասարակական ձեռ իր գոյությամբ պարտական ե պետությանը, վորը, այսպես ասած, կախված ե ողում, վոչ մի ընդհանուր բան չունի զոյությունը, ունեցող հասարակակարգի հետ և վորի արմատները գտնվում են անցյալի մեջ և վոչ թէ ներկայի մեջ»²:

Ենդելսին ուրիշ բան չեր մնում անել, քան յիթե խսուրեն ծաղրել Տկաչենի նման պնդումները: Ենդելսը Տկաչենին պատասխանեց. «Ողում կախված ե... վոչ թէ ուուսական պետությունը, այլ ավելի չուստ ինքը պ. Տկաչենը»³:

1 Մարքս, Избранные произведения, с. II, № 487, 1938 թ.:

2 Նույն տեղում, № 488:

3 Նույն տեղում, № 490:

Ենդելսն իր «Թուսաստանի հասարակական հարաբերությունների մասին» հոդվածում հանդես բերեց Թուսաստանի, նրա կյանքի տնտեսական և քաղաքական պայմանների զարմանալի ծանոթություն։ Ենդելսը պարզաբանում է, թե ում շահերն եւ արտացոլում ցարական ինքնակալությունը, և թվարկում է այն խալերը, վորոնց վրա նա հենվում է։ Ամենից առաջ, հարկավ, այդ՝ ազնվականությունն եւ, կալկածատերերը։ Այդ հոդվածում նա ցույց է տալիս, թե ի՞նչ է իրենից ներկայացնում Թուսաստանի ազնվականությունը։

«Յեփոսպական Թուսաստանում գյուղացիներն ունեն 105 միլիոն դեսյատին հող, ազնվականները (ինչպես յետ այս աեղ հակիմ լինելու համար անվանում եմ խոշոր հողատերին)՝ 100 միլիոն դեսյատին, վորից համարյա կեսը պատկանում է 15 հազար ազնվականներին, վորոնցից ամեն մեկը այսպիսով միջին հաշվով ունի 33 հազար դեսյատին։ Գյուղացիական հողը, հետեւաբար, միայն ամենաչնչին չափով ավելի յետ ազնվականական հողից։ Ինչպես տեսնում եք, ազնվականներն ամենաչնչին չափով ամսագույնություն անդամ չունեն նրանով, վորպեսի գոյություն ունենա ոռուսական պետությունը, վորը նրանց ապահովում է յերկրի կեսի տիրապետությունը։ Այսուհետեւ։ Գյուղացիներն իրենց կեսի համար տարեկան հողային հարկ են վճարում 195 միլիոն ուռելի, ազնվականները՝ 13 միլիոն։ Ազնվականական հողերը միջին հաշվով կրկնակի արդավանդ են գյուղացիական հողերից, վորովհետեւ կոռի հետպնման կապակցությամբ տեղի ունեցած մասնաւորման ժամանակ պետությունը գյուղացիներից իլեց և ազնվականներին հանձնեց վոչ միայն շատ հող, այլև լավ հողը, ըստվորում գյուղացիներն ստիպված ելին վատթարագույն հողի համար ազնվականությանը վճարել լավագույն հողի զնով։ Յեվ ոռւս ազնվականությունը բոլորովին չափագույն չափագույն չեռական պետության գոյությամբ»²։

¹ Բացառություն հանդիսացավ միայն լեհաստանը, վորակ կառավարությունը ուզում եր քայլայել իրեն թշնամի ազնվականությամբ։ Իր կողմը դրամի գյուղացիներին (նմգելի ծանրապրյամել)։

² Маркс, Избранные произведения, ч. II, № 490.

Ենդելսը թվարկում է մի ամբողջ շարք չափործող, պարագիտական ուրիշ տարրեր։ Մեծագնորդը, վորը գյուղում մեծ քանակով հաց է գնում։ սպեկուլանտը, վորը յերկար ժամկետով վարձակալում է պետական հողը, մշակում է այն «ինքը», քանի հողը լավ բերք է տալիս առանց վորեկ սպարապետացման, հետո այդ ուժատվառ հողը մասերին բաժանում և բարձր գնով վարձակալության տալիս հայեան սակալահող գյուղացիներին։ Ապա.

«Պետերբուրգի, Մոսկվայի խոշոր բուրժուազիան, Ռեսսասայի խոշոր բուրժուազիան անլսելի աղիան, վորը վերջին պատ տարում զարգանում է անլսելի արագությամբ, առանձնապես յերկաթուղիների կառուցման շնորհիվ, և վորին վերջին ճգնաժամը հարվածել է ամենաշնորհիվ, և վորին վերջին ճգնաժամիկի, կանեփի, վուշի և ճարպի խիստ կերպով, հացահատիկի, կանեփի, վուշի և ճարպի խիստ կերպով, հացահատիկի, կանեփի, վորոնց բոլոր գործերը կապաւցիում են գյուղացիների աղքատության վրա, ոռուսական ամբողջ խոշոր արդյունաբերությունը, վորը գոյություն ունի միայն պետության կողմից նրան շնորհված պահպանական մաքսերի շնորհիվ, մի՞թե բնակչության բոլոր այդ աղդեցիկ և արագորեն աճող տարրերը բնավ շալոր պայմանական պետության գոյությամբ։ Ել հաղթավոված չեն ոռուսական պետության գոյությամբ։ Ել չեղեղողած և կողոպտում է Ռուսաստանը և կազմում է այն հեղեղողած և կողոպտում է նահամար բանակի մասին, վորը չեմ խսկում չինովնիկների անհամար բանակի մասին, վորը չեղեղողած և կողոպտում է Ռուսաստանը և կազմում է այն հեղեղողած և կողոպտում է նահամար բանակի մասին դաս։ Յեկ յերբ այս բանից հետո պ. Տկաչեվը համատացնում է մեզ, թե ոռուսական պետությունը «ժողովուրդի տնտեսական կյանքի մեջ չունի վոչ մի արժատ», իբ մեջ չի մարմնալորում վոչ մի դասի շահերը», կախված են ողում, ապա մեզ սկսում ե թվալ, վոր վոչ թե ոռուսական պետությունը, այլ ամելի շուտ ինքը պ. Տկաչեվն է կախված ողում»¹։

Ենդելսը, մերկացնելով Տկաչեվի և նարունիկների միանդամայն վոչ գիտական հայացքը սոցիալական հեղափոխության նշանակության մասին, գրում եր.

«Ամեն մի խակական հեղափոխություն և, վորչափով նա իշխանության և հասցնում զափություն ե, վորչափով նա իշխանության և հասցնում մի դասակարգի և նրան հնարավորություն է տալիս վե-

¹ Маркс, Избранные произведения, ч. II, № 490.

ըամբուխելու հասարակությունն ըստ իր պատկերի ու նմանության»¹:

Ենդելսը խիստ քննադատում է այն տեսակետը, իբր թե Թուսաստանում հնարավոր և սոցիալիստական գյուղացիական հեղափոխություն:

Ենդելսի և Մարքսի այդ քննադատությունը, ուզդված նարողնիկական մտքի դեմ, հսկայական նշանակություն ունի հատկապես այն պատճառով, վոր այն ժամանակ Թուսաստանում դեռ մարքսիստական կազմակերպություն չկար և այդ՝ մարքսիստական առաջին քննադատությունն եր, վորը ջախջախում եր ոուս նարողնիկներին:

Տկաչելի հայացքները նրա անձնական հայացքները չելին: Հետաքա մի ամբողջ շարք փաստաթղթեր, վորոնք վերաբերում են «Նարողնայա վոլյա» կուսակցության գործունեյությանը, ցույց են տալիս, վոր Տկաչելի սկաները լայնորեն տարածված ելին և արտահայտված «Նարողնայա վոլյա» կուսակցության մի շարք փաստաթղթերի մեջ: Ահա, որինակ, «Նորողնայա վոլյայի» առաջին համարում տրպված ծրագրային հողվածի մեջ մենք կարդում ենք.

«Մեր պետությունը բոլորովին այն չե, ինչ յեւըսպական պետություններն են. մեր կառավարությունը—տիրապետող դասակարգերի լիազորների մի հանձնաժողով չե, ինչպես Յեւըսպայում, այլ ինքնուրույն, հենց իրեն համար գոյություն ունեցող մի կազմակերպություն ե, յերարխական-կարգապահ մի ասսոցիացիա, վորը ժողովրդին կպահեր տնտեսական և քաղաքական սորկության դրության մեջ, յեթե նույնիսկ դոյցություն չունենար վոչ մի շահագործող դաշտակարգ»:

Նարողնիկները (նարողովոլականները), չըմբռնելով ոուսական պետության դասակարգային բնույթը, չտեսնելով, վոր ինքնակալությունն իր մեջ մարմնավորում ե կալվածատեր ճորտատերերի տիրապետությունը, բանն այսպես ելին պատկերացնում իրենց բարական և վերացնել կառավարական «վերնախավը», և միանգամից ամեն ինչ կիրիկի, խանգարում են միայն մարդիկ, վորոնք կանգնած են

վերեվում, վորովհետեւ Թուսաստանում, ինչպես նրանք պնդում եյին, վոչ մի դատակարդ չկա, վորի վրա այդ մարդիկ հենվում են:

«Նարողնայա վոլյայի» № 3-ում զարդացվում է նույն տչաշեմիան-բակունինյան իդեան պետության մասին.

«Մենք տեսնում ենք, վոր պետական բուրժուական այդ պալարը պահպատմ ե բացառապես մերկ բոնությամբ, ուաղմական, վոստիկանական ու չինովնիկական կազմակերպության ուժով—բոլորովին այնպես, ինչպես պահվում եյին մեզ մոտ Զինդիս-խանի մոնղոլները»:

Թուսաստանյան պետության և պետական իշխանության ապագասակարգային ծագման վերաբերյալ հակագիտական և վնասակար այդ իդեան, վոր զարգացնում են նարողնիկներն ու բուրժուական պատմաբան Կլյուշեվսկին, հետագայում ներթափանցում ե նաև Պետանովի աշխատությունների մեջ:

Հենց այն պատճառով, վոր նարողնիկները բացասում ելին պետական իշխանության դասակարգայնությունը, նրանք կրանգնեցին դաշտական, բլանկիստական տակտիկայի ուղու վրա: Յարական կառավարությունը լիլիդիտացիայի յենթարկելու համար, նրանց կարծիքով հարկավոր չեր մասսայական վոչ մի կազմակերպություն, մասսայական վոչ մի կուսակցություն, վորովհետեւ չառ հեշտ ե հեղափոխություն կատարել, վորովհետեւ ժողովուրդը պատրաստ ե հեղափոխության համար, ժողովուրդը պատրաստ ե սոցիալիզմի համար, հարկավոր և միայն «վերնախավը վերացնել»: Նարողովոլական Ստեղնյակ-Կրավչինսկին հավատացնում էր, թե ցարական իշխանությունը տապալելու համար բավական և միջանի տասնյակ հոգուց բաղկացած մի դաշտակարգ կազմակերպություն:

Ենդելսը վճռական հարված հասցեց նարողնիկների այդ ուսակցիոն «թեորիային» և պրակտիկային: Այնուհետեւ Մարքսի ու Ենդելսի հետեւորդները Թուսաստանում, յեւնելով ցարական ինքնակալությունը, կալվածատերերին, բուրժուազիային հեղափոխականորեն տապալելու անհրաժեշտությունից, հարց դրին մասսայական մարտական, պրոլետարական կուսակցություն ստեղծելու մասին, մասսանելու առաջարկությունը:

¹ Маркс, Избранные произведения, ч. II, № 400:

ըին լրջութեն հեղափոխության համար նախապատրաստելու ժամանքն, մասսաների մեջ պրոպագանդա և ազիտացիա մղելու ժամանքն:

Աենինը, մերկացնելով նարոդնիկներին, մատնանշում եր, թե նարոդնիկները վոչ միայն սխալ ելին պատկերացնում պատմության ամբողջ ընթացքը (թեորիական սկզբան-կություն), այլ և իրենց գործունեցության մեջ նրանք չելին հենալում վոչ մի մասսայական կազմակերպության վրա (գործնական անպորություն):

«Միանդամից» բոլոր և ամեն տեսակ շահագործումը վոչնչացնելու մասին արգեն վաղուց, շատ դարեր, նույնիսկ հազարամյակներ և յերազում մարդկությունը: Բայց այդ յերազները յերազներ ելին մնում այնքան ժամանակ, մինչեւ վոր միլիոնավոր շահագործվարներ սկսեցին համախմբվել ամբողջ աշխարհում հետևողական, կայուն, բազմակողմանի կռիվ մղելու համար կապիտալիստական հասարակությունը այդ հասարակության սեփական զարդացման ուղղությամբ փոփոխելու նպատակով: Սոցիալիստական յերազները միլիոնավոր մարդկանց սոցիալիստական կույի փոփոխեցին միայն այն ժամանակ, յերբ Մարքսի գիտական սոցիալիզմը, բարենրոդչական ձգտումները վորոշ դասակարգի կովկի կապեց: Դասակարգային կովկից դուրս սոցիալիզմը դատարկ ֆրազ կամ մի նախկ յերազանք ե»¹:

V. «ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹՅՈՒՆ» ԽՄԲԻ
ՊԱՅ-ՔԱՐԵ ՆԱՐՈԴՆԻԿՈՒԹՅԱՆ ԴԵՄ

«Աշխատանքի ազատագրություն» խումբը, վորը հսկայական դեր խաղաց Ծուսաստանում մարքսիզմի տարածման մեջ, առաջացավ հարկավ վոչ այն պատճառով, վոր Պետրովը սկսեց ընթերցել Մարքսին: Պէտքանովիք համար և ամբողջ «Աշխատանքի ազատագրություն» խմբի համար Մարքսի ընթերցումը, անկատկած, վիթխարի նշանակություն ունեցավ. ել ավելի մեծ նշանակություն ունեցավ այդ խմբի ծանոթանալը արևմտայեվրոպական բանվորական շարժման հետ, յերբ Պէտքանովը և ուր արտադադեցին Յելլընուական պատկանը: Նրանք յեվրոպական մասսայական բանվորական շարժման մեջ տեսան Մարքսի ուսմունքի գործնական մարմնացումը, մինչդեռ Ծուսաստանում կյանքը ցույց տվեց նարոդնիկության թե՛ թեորիայի և թե՛ պրակարիկայի սնանկությունը: Այստեղից ել սկսվեց նարոդնիկական ամբողջ աշխարհայացքի վերանայումը: Պէտքանովը և նրա խումբը առաջինն ընդունեցին Մարքսի ուսմունքը և, մարքսիզմը քարոզելով, վճռական պայքար ծափալեցին նարոդնիկության զեմք: Մարքսիզմի տարածման և Ծուսաստանում մարքսիստական առաջին խմբերի առաջացման համար վճռողական նշանակություն ունեցավ բանվորական շարժման մեջ սկսված աշխուժացումը, բանվորական մասսաների կազմակերպված յելույթները: Եշելով բանվորական շարժման դարձությունը, լենինը մատնանշում և այն, վոր արդեն «ՅՈ-ական և ՇՈ-ական թվականների գարաշընանը դիտե արդեն «մասսաների» մեջ տարածվել սկսած մարտական գեմոկրատական և տառպիտական սոցիալիստական բոլանդակություն ունեցող՝ ժամունի անցենդուր գրվածքների մի ամբողջ շարք: Իսկ այն գարաշընանի գործիչների մեջ ամենաաչքի ընկնող տեղը գրավում են բանվորներ Պյոտր Ալեքսեյեվը, Ստեպան Խալտուրինը և ուր ։ Բայց նարոդնիկության ընդհանուր հեղե-

¹ Լենին, Մանր-բուբժուտական և պրոլետարական սոցիալիզմ, Յերկ., 4. VIII, Հայ. Հբառ., եջ 518:

դի մեջ պրոլետարական դեմոկրատական հոսանքը չեր կարող առանձնանալ : Նրա առանձնացումը հնարավոր դարձավ այն բանից հետո միայն, յերբ իդեալիստ վորոշից ոռւսական մարքսիզմի ուղղությունը («Աշխատանքի ազատագրություն» խումբը, 1883 թ.) և սկսվեց բանվորական անրնդհատ շարժումը սոցիալ-դեմոկրատիայի կամակցությունը (1895—1896 թվականների Պետերբուրգի գործադրությունը)»¹ :

«Աշխատանքի ազատագրություն» խմբի առաջացմամբ մարքսիզմի նարողնիկության դեմ մղած պայքարի զարդարման մեջ մի նոր ետապ և սկսվում :

«Պայքարելով նարողնիկների դեմ և մերկացնելով նրանց, Պէխանովը զբեց մի շարք մարքսիստական աշխատություններ, փորոնցով սովորում և գաստիարակվում ելին մարքսիստաները Ռուսաստանում : Պէխանովի այնպիսի աշխատությունները, ինչպես «Ասցիալիզմ» ու քաղաքական պայքարը, «Մեր տարածայնությունները», «Պատմության նկատմամբ մոնիստական հայացքի զարգացման հարցի չուրջը», հող մաքրեցին, մարքսիզմի հաղթանակի համար Ռուսաստանում»² :

«Աշխատանքի ազատագրություն» խմբի պայքարը նարողնիկության դեմ շատ մեծ նշանակություն ունեցավ վորպես Ռուսաստանի առաջին սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների պայքար նարողնիկության դեմ : Դա մարքսիզմի զարգացման, Ռուսաստանի բանվորական կուսակցության զարգացման «արգանդային ժամանակաշրջան» եր, սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների ծննդյան ժամանակաշրջանը : Այդ ժամանակաշրջանում նարողնիկության դեմ մղված պայքարը Պէխանովի և «Աշխատանքի ազատագրություն» ամբողջ խմբի արժանիքն և կազմում : Իհարկե Մարքսն ու Ենգելսը նախապատրաստեցին այդ պայքարը, առաջինը տվին նարողնիկության քննադատությունը :

Նարողնիկության քննադատությունը Պէխանովի և Ակ-

ոնլուգի կողմից ուղղված եր Ռուսաստանի զարգացման ուղիների ինքնուրույնության վերաբերյալ, զյուղացիության, վորպես իր թե ամենահեղափոխական դասակարգի գերի վերաբերյալ, ոռւսական գյուղացիական համայնքի, վորպես սոցիալիստական տնտեսության սաղմի գերի և այլնի վերաբերյալ նարողնիկական թերիայի գլխավոր հիմքերի գեմ : Առանձնապես Պէխանովը խիստ կերպով հանդես եր գալիք քաղաքական պայքարի նկատմամբ յեղած նարողնիկական հայացքների գեմ : Նարողնիկները բացառում եյին քաղաքական պայքարի նշանակությունը կամ չեյին կարողանում սոցիալիզմի համար մղելիք պայքարը միացնել քաղաքական ազատության համար մղելիք պայքարի հետ :

Նարողնիկության դեմ մղած պայքարում Պէխանովն ապացուցում եր . 1) պրոլետարական հեղափոխությունը չի կարող աճել մեշանական գյուղացիական այն սոցիալիզմից, վորը քարոզում են նարողնիկները . 2) գյուղական համայնքն ամենեին չի ձգում ժողովրդական տնտեսության կոմունիստական ձևերին . 3) անցումը դեպի կոմունիզմ տեղի կունենա վոչ գյուղացիական համայնքի միջով . 4) կոմունիստական շարժման նախաձեռնությունը կարող է վերցնել իր վրա միայն բանվոր դասակարգը . 5) բանվոր դասակարգի ազատագրումը պետք է լինի հենց իրեն բանվոր դասակարգի գործը :

«Նարողնիկների դեմ ուղղված իր աշխատություններում Պէխանովն ապացուցեց, վոր անհեթեթություն և հարցն այնպես զնել, ինչպես նարողնիկներն եյին զնում՝ պե՞տք ե, թե չպետք ե զարգանա կաղիտավիզմը Ռուսաստանում : Բանն այն ե, ասում եր Պէխանովը՝ փաստերով այդ ապացուցելով, վոր Ռուսաստանն արդեն քեալիխել ե կապիտալիստական զարգացման ուղին և վոր չկա այնպիսի մի ուժ, վոր կարողանա չեղել նրան այդ ուղուց :

Հեղափոխականների խնդիրն այն չեր, վորպեսպի կանցնեյին կաղիտավիզմի զարգացումը Ռուսաստանում, —այդ բանը նրանք, միենույն ե, չեյին կարող անել : Հեղափոխականների խնդիրն այն եր, վորպեսպի հենվեյին այն հզոր հեղափոխական ուժի վրա, վորը ծնվում է կաղիտավիզմի

¹ Անթի, Իз прошлого рабочей печати в России, Յւրկ., հ. XVII, ուսու. 4թար., էջ 342 :

² Համել(բ)կ պատմություն : Համառոտ զարգնթաց, հայ. հրատ., էջ 10 :

դարդացմամբ, —ըստնոր դասակարգի վրա, զարդացնելին նրա դասակարգային զիտակցությունը, կաղմակերպելին նրան, ողնելին նրան ստեղծելու իր բանվորական կուսակցությունը: Պէտքանովը ջախչախեց նարողնիկների նաև յերկրորդ հմնական սխալ հայացքը՝ նրանց կողմէց պրոլետարիատի առաջատար դերի ժխտումը հեղափոխական պայքարի մեջ: Նարողնիկները պրոլետարիատի առաջացումը թուսատանում դժուում ելին վորպես յուրատեսակ «պատմական դժբախտություն», զրում ելին «պրոլետարիատության խոցի» մասին: Պէտքանովը պաշտպանելով մարքսիզմի ուսմունքը և նրա լիակատար կիրառելիությունը թուսատանի նկատմամբ, ապացուցում եր, վոր չնայելով դյուդացիության քանակական գերակշռությանը և պրոլետարիատի համեմատական փոքրաթվությանը, —հենց պրոլետարիատի վրա, նրա աճման վրա պիտի դնեն հեղափոխականներն իրենց գլուխոր: Հույսերը:

Ինչո՞ւ հատկապես պրոլետարիատի վրա:

Վորովչետե պրոլետարիատը, չնայելով նրա ներկային փոքրաթվությանը, մի այնպիսի աշխատավոր զասակարգ և հանդիսանում, վորը կապված ե տնտեսության առավել առաջավոր ձևի հետ, —խոշոր արտադրության հետ, և այդ պատճառով մեծ առաջար:

Վորովչետե պրոլետարիատը, վորպես դասակարգ, տարեցտարի անում ե, քաղաքականապես զարգանում ե, չնորչի խոցոր արտադրության մեջ տիրող աշխատանքային պայմանների՝ հետությամբ յենթակա յե կաղմակերպման և չնորչի իր պրոլետարական դիրքի ամենից շատ հեղափոխականն ե, վորովչետե հեղափոխության մեջ նա վոչինչ չունի կորցնելու, բացի իր շղթաներից:

Գյուղացիության բանն ուրիշ ե:

Գյուղացիությունը (խոսքը վերաբերում է մենատնտես գյուղացիությանը: —Խմբ.), չնայելով նրա բաղմաթիվ լինելուն, մի այնպիսի աշխատավոր դասակարգ և հանդիսանում, վորը կապված ե տնտեսության առավել հետամնաց ձևի հետ, —մանր արտադրության հետ, այդ պատճառով նա մեծ առաջար չունի և չի կարող ունենալ:

Գյուղացիությունը վոչ միայն չի աճում՝ վորպես դա-

սակարգ, այլ ընդհակառակը, տարեցտարի տրոհվում ե բուրժուազիայի (կուլակներ) և չքալորության (պրոլետարներ, կիսապրոլետարներ): Բացի այդ, չնորչիվ իր մանրատվածության նա ավելի դժվար է յենթարկվում կազմակերպման և չնորչիվ իր մանր-սեփականատիրական դիրքի ավելի քիչ հաճույքով և մտնում հեղափոխական շարժման մեջ, քան պրոլետարիատը:

Նարողնիկները պնդում ելին, վոր թուսաստանում սոցիալգոմը կու վոչ թե պրոլետարիատի դիկտատուրայի միջոցով, այլ գյուղացիական համայնքի միջոցով, վորը նրանք համարում ելին սոցիալիզմի սաղմ և բազա: Բայց համայնքը սոցիալիզմի վոչ բազան եր և վոչ ել սաղմը և չեր ել կարող լինել, վորովհետեւ համայնքում տիրակալում ելին կուլակները, «աշխարհակերները», վորոնք շահագործում ելին չքալորներին, բատրակներին, սակավազոր միջակներին: Զեականորեն գոյություն ունեցող համայնական հոգատիրությունը և ժամանակ առ ժամանակ տեղի ունեցող ըստ չողաբաժանումները գործը վոչնչով չելին փոխում: Զողից ողտմում ելին համայնքի այն անդամները, վորոնք ունելին բանող անսառն, ինվենտար, սերմացու, այսինքն՝ ունեոր միջակներն ու կուլակները: Զիազուրի գյուղացիները, չքալորները և ընդհանրապես սակավազորներն ստիպված ելին չողը տալ կուլակներին ու զնալ վարձվելու բատրակության: Գյուղացիական համայնքն իրավես ամենահարմար ձևն եր՝ քողարկելու համար կուլակային ձեշումը և եժան միջոց եր ցարիզմի ձեռքին՝ գյուղացիներից հարկերն ըստ համապարտ յերաշխավորության սկզբունքի հավաքելու համար: Հենց գրա համար ել ցարիզմը ձեռք չեր տալիս գյուղացիական համայնքին: Ծիծաղելի կլիներ արդիսի համայնքը համարել սոցիալիզմի սաղմ կամ բազա:

Պէտքանովը ջախչախեց նարողնիկների նաև յերրորդ հիմնական սխալ հայացքը՝ հասարակական գարգացման մեջ «հերոսների», աչքի ընկնող անձնականությունների, նրանց գաղափարների ունեցած առաջնակարգ դերի վերաբերմար և մասսայի, «ամբոխի», ժողովրդի, դասակարգերի չնչի գերի վերաբերմար: Պէտքանովը նարողնիկներին մեղադրում եր իդեալիզմի մեջ, ապացուցելով, վոր ճշմարտու-

թյունը վոչ թե իդեալիզմի կողմն է, այլ Մարքսի—Ենդելսի մատերիալիզմի կողմը:

Պէտք իմանովը ծավալեց ու հիմնավորեց մարքսիստական մատերիալիզմի տեսակետը: Համաձայն մարքսիստական մատերիալիզմի՝ նա ապացուցում եր, վոչ հասարակության զարգացումը վերջին հաշվով վորոշում ե վոչ թե աչքի ընկնող անձնավորությունների ցանկություններով ու դադարիաներով, այլ հասարակության դոյության նյութական պայմանների զարգացմամբ, հասարակության դոյության համար անհրաժեշտ նյութական բարիքների արտադրության ձևերի փոփոխություններով, նյութական բարիքների արտադրության ասպարիզում դասակարգերի փոխարարերություններով, նյութական բարիքների արտադրության ու բաշխման ասպարիզում դերի ու տեղի համար դասակարգերի մղած պայքարով: Վոչ թե գաղափարներն են վորոշում մարդկանց հասարակական-տնտեսական կացությունը, այլ մարդկանց հասարակական-տնտեսական կացությունն ե վորոշում նրանց գաղափարները: Աչքի ընկնող անձնավորությունները կարող են վոչնչի փոխարկվել, յեթե նրանց գաղափարներն ու ցանկությունները հակառակ են գնում հասարակության տնտեսական զարգացմանը, հակառակ են գնում առաջավոր դասակարգի պահանջմունքներին, և—ընդհակառակը—աչքի ընկնող մարդիկ կարող են դառնալ իրոք աչքի ընկնող անձնավորություններ, յեթե նրանց գաղափարներն ու ցանկությունները ճշտորեն են արտահայտում հասարակության տնտեսական զարգացման պահանջմունքները, առաջավոր դասակարգի պահանջմունքները:

Նարոդնիկների այն պնդմանը, թե մասսան ամրոխ ե, թե միայն հերոսներն են պատմությունների թերությունը ժամանակում, մարքսիստները պատասխանում են: Վոչ թե հերոսներն են պատմությունների կերպում, այլ պատմությունն ե հերոսներ կերպում, հետեւարար, —վոչ թե հերոսներն են ժողովուրդ ստեղծում, այլ ժողովուրդն ե հերոսներ ստեղծում և պատմությունը շարժում առաջ: Հերոսները, աչքի ընկնող անձնավորությունները հասարակության կյանքում կարող են լուրջ դեր խաղալ այնչափով միայն, վորչափով նրանք կարողանան ձիւտ համարնալ:

Հասարակության զարգացման պայմանները, հասկանալ, թե ինչպես այդ պայմանները փոխել գեպի լավը: Հերոսները, աչքի ընկնող անձնավորությունները կարող են ընկնել ծիծաղելի և վոչ վոքի պետք չեկող ձախողակ մարդկանց զրության մեջ, յեթե նրանք չկարողանան ճիշտ համարնալ հասարակության զարգացման պայմանները և սկսեն զոռել ընդդեմ հասարակության պատմական պահանջմունքների, պատմություն «կերտողներ» յերևակայելով իրենց:

Հենց այսպիսի ձախողակ հերոսների չարքին ել պատկանում եյին նարոդնիկները¹:

1881 թ. մարտի 1-ից հետո նարոդնիկական միջավայրում սկսված քայլքայումը և չըջադարձը դեպի լիբերալիզմը Պլեխանովը դիտում եր վորապես վոչ պատահական յերեվույթ: «Նարոդնայա վոլյայի» հիմնադիրներից և թերութիվներից մեկի՝ ցարիզմի կողմն անցած լեզ Տիխոնմիրովի քաղաքական խայտառակ անկման առթիվ Պլեխանովը «Новый защитник самодержавия или горе г. Л. Тихомирова» հոդվածում գրում եր.

«Այդ ցավալի յե, բայց դրանում կա իր անխուսափելի տրամաբանությունը: Մի մարդու համար, վորը վոչ մի կերպ չեր ուղում հրաժարվել ուստական գյուղի անդրջրհեղեղյան տնտեսական հարաբերություններն իդեալականացնելուց, բնական եր իր կյանքն ավարտել ցարիզմը, հիշված հարաբերությունների քաղաքական այդ լնական պտուղն իդեալականացնելով: Պ. Տիխոնմիրովի այժմյան հայացքներն իրենցից ներկայացնում են վոչ ավելի, քան սոցիալիստնարուդնիկների թերորիստն նախադրյալներից արված տրամարանական, թեպետ և շատ տղեղ յեղակացություն, նախադրյալներ, վորոնք նա միշտ համարում եր անվիճարկելի»²:

Պլեխանովն ապացուցում եր, վոր Տիխոնմիրովի դավաճանությունը տրամարանորեն այն անհաջողությունների հետեւանքը հանդիսացալ, վոր կրեցին նարոդնիկները գյու-

1 Համկ(ր)կ պատմություն: Համառոտ դասընթաց, Հայ. Հրատ., էջ 18—21:

2 Плеханов, հ. III, էջ 59:

ղում: Հենց Պլեխանովի կողմից տռաջ քաշված նարողնիկ-ների հետ յեղած տարածայնությունների կետերի շուրջն եւ դլսավորապես ծավալվեց մարքսիստների պայքարը նարող-նիկության դեմ այդ ժամանակաշրջանում:

«Պլեխանովի գրական յերկերը, նրա պայքարը նարող-նիկների դեմ—հիմնովին դցեցին նարողնիկների ազդեցու-թյունը հեղափոխական ինտելիգենցիայի միջավայրում: Բայց նարողնիկության գաղափարական ջախջախումը դեռևս վերջնականապես չեր ավարտված: Նարողնիկության՝ վոր-պես մարքսիզմի թշնամու վերջնականապես ջախջախման այդ խնդիրը վիճակվեց լենինին»¹:

Իրեն Պլեխանովի հայացքներում յեղեւ են նաև գդալի սխալներ: Բայտ ոռւսական «կաթով բերանն այրողը ջրին եւ կփչի» առածի Պլեխանովը, վորը յերկարատև ժամանակի ընթացքում կողմնակից եր զյուղացիության վերաբերմամբ նարոդնիկների ունեցած սխալներին, իդեալականացնելով զյուղացիությանը, հետագայում սկսեց ընդհանրապես բա-ցանել զյուղացիության վորեւ հեղափոխական դերը:

«Աշխատանքի ազատադրություն» խմբի առաջին ծրա-դրում (1883 թ.) զյուղացիությանը յերկրորդական դեր է հատկացվում: Դյուլացիության վրա, խմբի կարծիքով, սո-ցիալիստներն այն ժամանակ պետք է ուշադրություն դարձ-նեն, յերբ նրա միջավայրում կնշվի ինքնուրույն հեղափո-խական շարժում: 1885 թ. խմբի ծրագրի մեջ խոսվում է այն ժաման, վոր «Խուսական հեղափոխական շարժումը, վորի հաղթանակը, ամենից առաջ, կծառայեր հոգուտ գյու-ղացիության, նրա մեջ համարյա չի գտնում վո՛չ աջակցու-թյուն, վո՛չ ել ըմբռնում: Աքսուլուտիզմի ամենազլիավոր հենարանը հենց զյուղացիության քաղաքական անտարերու-թյունն է, մտավոր հետամնացությունը»: Հարկավ, չափա-դանց մեծ նշանակություն ունեցավ այն, վոր Պլեխանովն այն ժամանակ առանձին ուժով ընդգծում եր պրոլետարիա-տի՝ վորպես հեղափոխության դլսավոր շարժիչ ուժի՝ դե-րը, վոր «առանց իրենց դասակարգային շահերը գիտակցու-

¹ Համեր(բ)կ պատմություն: Համառոտ դասընթաց, հայ. հրատ., էջ 21:

բանվորների չկա սոցիալիզմ»²: Բայց Պլեխանովը վիթխարի վնաս եր հասցնում շարժմանը, յերբ ճիշտ չընահատելով դյուլացիության և բուրժուազիայի դերն առաջիկա հեղա-փոխության մեջ, 1890 թ. պնդում եր, թէ «բացի բուր-ժուազիայից ու պրոլետարիատից մենք չենք տեսնում ուրիշ հասարակական ուժեր, վորոնց վրա մեզ մոտ կարողանային չենլել ոպողիցիոն կամ հեղափոխական կոմբինացիանե-րը»³:

Այստեղ Պլեխանովի հայացքների մեջ արդեն նշմարվում եր սուսական հեղափոխության մեջ բուրժուազիայի ունե-նալիք դերի նրա ապագա մենշևիկյան գնահատականը: Բուր-ժուազիային Պլեխանովը համարում եր հեղափոխական ուժ, պրոլետարիատի դաշնակիցը: Տվյալ դեպքում նա դյուլա-ցիությանը հաշվից դուրս եր դցում: «Պրոլետարը և «պեղ-ջուկը» այդ՝ թսկական քաղաքական հակոտնյաներ են»⁴, — զրում եր Պլեխանովը: Պլեխանովի կարծիքով, պրոլետա-րիատի պատմական դերը նույնքան հեղափոխական է, վոր-քան պահպանողական և «պեղջուկի» դերը: Այսպիսով Պլե-խանովը չեր ել կարող հարց զնել բանվոր դասակարգի՝ զյուղացիության հետ կամելիք դաշինքի մասին:

Այստեղից ել բղխում եյին Պլեխանովի սխալները պրո-լետարիատի դիկտատուրայի հարցում: Պլեխանովը բուր-ժուազիայի մեջ տեսնում եր պրոլետարիատի դաշնակիցին, իսկ պրոլետարիատի դիկտատուրան կարող եր կազմավորվել ու հաղթել միայն բուրժուազիայի, այդ թվում և լիբերալ բուրժուազիայի դեմ մղված պայքարում:

Բայցի դրանից, Պլեխանովը միանդամից չկարողացավ ազատավել նարոդնիկական բուրժուազիական տեսությունը, և այդ պատ-ճառով «Աշխատանքի ազատադրություն» խմբի ծրագրում վորպես վիճում, վորպես հարկ նարոդնիկությանը մնաց անհատական տեսությի, վորպես հեղափոխական պայ-

¹ Плеханов, О задачах социалистов в борьбе с голodom в России, թերկ., 4. III, էջ 397:

² Плеханов, Еще раз о принципах и тактике русских социалистов, թերկ., 4. III, էջ 120:

³ Плеханов, О задачах социалистов в борьбе с голodom в России, թերկ., 4. III, էջ 380:

քարի մէջոցի ճանաչումը։ Պէտահովը չկարողացավ ազատ-
վել նաև Ռուսաստանի ցարական ինքնակալության բնույթի
նկատմամբ ունեցած անձիւտ հայացքներից, վորը հետազա-
յում նրան քաղաքական մեծ սխալների հասցրեց։

Այսուամենայնիվ անվիճելի յէ, վոր Պէտահովը և
«Աշխատանքի ազատագրություն» ամբողջ խումբը լուրջ
հարված հասցրին նարողնիկությանը։ Նրանց պայքարն ա-
վելի մեծ նշանակություն ունեցավ նրանով, վոր նրանք
իրենք նարողնիկական շարժման անմիջական մասնակից-
ներն եյին։ Բայց նարողնիկության նրանց քննադատությու-
նը, ինչպես մենք արդեն տեսանք, իր մեջ պարունակում եր
հեղափոխության մեջ գյուղացիության դերի վերաբերյալ և
բուրժուազիայի գերի վերաբերյալ հարցի այնպիսի սխալ
դրում, վոր նարողնիկության ողբակար քննադատության
հետ հավասարապես «Աշխատանքի ազատագրություն» խում-
բըն արդեն այն ժամանակաշրջանում հանդես յեկավ վոր-
պես տարածող բոլորովին սխալ, ոպորտունիստական հա-
յացքների ռուսական հեղափոխության շարժիչ ուժերի վե-
րաբերյալ, նրա մեջ տարբեր դասակարգերի ունենալիք գերի
վերաբերյալ հարցի շուրջը, և զարգացնում եր իդեաներ, վո-
րոնք հետադայում հիմք ծառայեցին մենչեւիկյան թերթայի
և տակտիկայի համար։

Միայն Լենինը նարողնիկության դեմ ուղղված պայքա-
րի բոլոր հարցերը գրեց նոր ձեռվ, հայտաբերեց նարողնի-
կության դասակարգային իսկական եյությունը, մինչև վեր-
ըլ մերկացրեց նարողնիկական թեորիաների և մեթոդների
հետազիմականությունը, տալով պրոլետարական կուսակ-
ցության՝ ինքնակալության դեմ, կապիտալիզմի դեմ, պրո-
լետարիատի դիկտատուրայի համար պայքարելու ծավալուն
ծրագիրը։

VI. ԼԵՆԻՆԻ ՅԵՎ. ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՅՔԱՐԸ ՆԱՐՈԴՆԻԿՈՒԹՅԱՆ ԴԵՄ

Քաղաքական ասպարիզում վ. ի. Լենինի յերկան դա-
լով պայքարը նարողնիկության դեմ նոր ձեռվ և նոր բո-
վանդակություն և ընդունում, վորովհետեւ Լենինը, վերա-
ծնելով հեղափոխական մարդուղմը, վորն աղավաղել եյին
II ինտերնացիոնալի ոպորտունիստները, զարգացրեց մարք-
սիզմը պլութարական շարժման զարգացման և նոր դարա-
շրջանի, իմպերիալիզմի և պրոլետարական հեղափոխու-
թյունների զարաշրջանի տնտեսական զարգացման համա-
պատասխան։ Իր սկզբնական յերկերում—«Ի՞նչ են «Ժողո-
վը» բարեկամները» և ի՞նչպես են նրանք մարտնչում սո-
ցիալ-դեմոկրատների դեմ», «Կատվիտալիզմի զարգացումը
Ռուսաստանում» և «Նարողնիկության տնտեսական բռնա-
դակությունը և նրա քննադատությունը պ. Սարուվեյի գլո-
բում» Լենինը փաստական վիթխարի նյութի վերլուծության
և քննության հիման վրա ջախջախեց նարողնիկության
իդեալական-քաղաքական հայացքները և իդեալիստ պրո-
լետարիատին ինքնակալության դեմ պայքարելու համար,
հանուն սոցիալիզմի պայքարելու համար։

90-ական թվականների մոտերքին 70—80-ական թվա-
կանների նարողնիկությունն այլասերիմեց և դարձավ այս-
պես կոչված լիբերալ նարողնիկություն, վորի ներկայացու-
ցիչներն են Միխայլովսկին, Յուժակովը, Կրիվենկոն և
Նրանց «Русское богоатство» ժուռնալը։

«Նարողնիկների մեծամասնությունը «Նարողնայա վո-
լյա» կուսակցության ջախջախումից հետո շուտով հրաժար-
վեց զարական կառավարության դեմ հեղափոխական պայ-
քար մղելուց, սկսեց քարողել հաշտություն, համաձայնու-
թյուն զարական կառավարության հետ։ 80-ական և

90-ական թվականներին նարողնիկները գարձան կուլակության շահերի արտահայտիչներ»¹:

Լենինը մինչև «Բանվոր դասակարգի ազատազրության պայքարի միության» առաջացումը յեղած ժամանակաշրջանը անվանում է սոցիալ-դեմոկրատիայի գարգացման «արդանդային ժամանակաշրջան», վորն ընդգրկում է մոտ 10 տարի (1884—1894 թ. թ.).

«Դա սոցիալ-դեմոկրատիայի թեորիայի ու ծրագրի ծագման և ամրացման ժամանակաշրջանն եր: Նոր ուղղության կողմնակիցների թիվը Ռուսաստանում չափում եր միավորներով: Սոցիալ-դեմոկրատիան գոյություն ուներ առանց բանվորական շարժման, վորպես քաղաքական կուսակցություն, ապրելով արգանդային զարգացման պրոցես»²:

Մենք արդեն տեսանք, վոր Ռուսաստանում սոցիալ-դեմոկրատական կազմակերպության «արդանդային շարժացման» այս ժամանակաշրջանում «Աշխատանքի ազատազրություն» խումբը սկայքար եր մղում նարոդնիկության գեմ, հայտաբերելով նարոդնիկության սխալները և զգալի հարվածներ հասցնելով նրան: Բայց այդ հարվածները թուլանում եյին նրանով, վոր իրենք քննադատներն ազատ չեյին նարոդնիկական վորոշ սխալներից, առանձնապես, ինչպես մենք տեսանք, հեղափոխության մեջ գյուղացիության ու բուրժուազիայի գերի վերաբերմամբ և պլութոսարիատի, գյուղացիության ու բուրժուազիայի փոխհարաբերությունների հարցում: Իսկ զա ոռուսական հեղափոխության հիմնական հարցերից մեկն եր և այդ պշտժառով տարբեր դասակարգերի գնահատման մեջ արված սխալները հասցնում եյին լուրջ սխալների նաև ոռուսական հեղափոխության շարժիչ ուժերի գնահատման մեջ, «Աշխատանքի ազատազրություն» խմբի մասնակիցների ծրագրային և տակտիկական գծում, խումբ, վորը հետագայում կազմեց մենշևիկյան կուսակցության կորիզը:

¹ Համեկ(ր)կ պատմություն: Համառոտ գասընթաց, հայ. հրատ., էջ 21:

² Լենին, Что делать? Յերկ., հ. IV, ոռու. հրատ., էջ 499:

Վ. Ի. Լենինի ղեկավարած «Բանվոր դասակարգի ազատազրության պայքարի միության» գործունեյությունն սկսվում է արդեն բանվորական մասսայական շարժման անհամեմատ ավելի բարձր վերելքի ժամանակաշրջանում: Այդ յերկրորդ ժամանակաշրջանը Լենինն անվանում է սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության զարգացման «մանկության և պատանեկության ժամանակաշրջան»:

«Յերկրորդ ժամանակաշրջանն ընդգրկում է յերեք-չորս տարի, 1894—1898 թվականները: Սոցիալ-դեմոկրատիան լույս աշխարհ և դաշտ, վորպես հասարակական շարժում, վորպես ժողովրդական մասսաների վերելք, վորպես քաղաքական կուսակցություն: Դա—մանկության և պատանեկության ժամանակաշրջանն է: Համաճարակի արագությամբ տարածվում է ինտելիգենցիայի ընդհանրածավալ հրապուրանքը նարոդնիկության գեմ մղվող պայքարով և բանվորների մոտ գնալով, բանվորների ընդհանրածավալ հրապուրանքը գործադրուներով: Շարժումն ահազին հաջողություններ և ունենում: Ղեկավարների մեծամասնությունը բոլորովին յերիտասարդ մարդիկ են, վոր ամենեկին չեն հասել այն ցյերեսունհինգամյա հասակին», վորը պ. Ն. Միխայլովիկուն թմրում եր ինչ-վոր բնական սահման: Իրենց յերիտասարդության չնորհիպ նրանք անպատճառ են հանդիսանում պրակտիկ գործունեյության և զարմանալի արագ կերպով թողնում են ասպարեզը»¹:

Այդպիսի իրադրության մեջ լենինը պետք է ընդհարվեր նարոդնիկների հետ իր գործունեյության հենց սկզբնական ժամանակից՝ «Բանվոր դասակարգի ազատազրության պայքարի միություն» ստեղծելիս:

«Թեև Պլեխանովն արդեն 80-ական թվականներին հիմնական հարված եր հայցքների հայցքների նարոդնիկական սիստեմին, սկզբան 90-ական թվականների սկզբներին նարոդնիկների հայցքները հեղափոխական յերիտասարդության մեջ վորոշ մասի մեջ դեռևս համակրանք եյին գըտնում: Յերիտասարդության մեկ մասը շարունակում, եր կարծել, թե Ռուսաստանը կարող է խուսափել զարգացման

¹ Լենին, Что делать? Յերկ., հ. IV, ոռու. հրատ., էջ 499:

կապիտալիստական ուղուց, թե հեղափոխության մեջ գըլ-խալոր դեր խաղալու յի գյուղացիությունը, և վոչ թե բան-վոր դասակարգը: Նարողնիկների մնացորդներն ամեն կերպ ջանում եյին խանդարէլ մարքսիզմի տարածմանը Ուռւաս-տանում, մարքսիստների դեմ պայքար սկսեցին, ջանալով ամեն կերպ արատավորել նրանց: Մարքսիզմի հետազա տա-րածումը և սոցիալ-դեմոկրատական կուսակցության ստեղծ-ման Հնարավորությունն ապահովելու համար հարկավոր եր մինչեւ վերջը դաշտավագես ջախջախնել նարողնիկությունը:

Այդ աշխատանքը կատարեց Լենինը¹:

Մարքսիստական հեղափոխական առաջին խմբակներում նարողնիկների հետ մզկող վեճերը շատ մեծ տեղ եյին գրա-վում: Թե ինչպիսի լուրջ նշանակություն եր տալիս Լենինը նարողնիկության դեմ մզկող պայքարին, յերեսում ե այն բանից, վոր նրա աշխատությունների առաջին հատորները նշանակալի չափով նվիրված են նարողնիկությունը մերկաց-նելուն: Առաջին հատորում մենք դանում ենք այնպիսի մի նշանավոր աշխատությունն, ինչպիսին ե «Ի՞նչ են «ժողովրդի բարեկամները» և ի՞նչպես են նրանք մարտնչում սոցիալ-դեմոկրատների դեմ», յերկրորդ հատորի կեսը նվիրված է նարողնիկների դեմ մզկած պայքարին: «Կ характеристике экономического романтизма», «Кустарная перепись 1894/5 года в Пермской губернии и общие вопросы «кустарной» промышленности», «Перлы народнического проектирования», «От какого наследства мы отказываемся?» հոդված-ներում Լենինը Սիմոնդիի և Աղամ Սմիթի քննադատության վրա լույց տվեց, վոր «նարոդնիկների տիտեսական ուս-մունքը համա-յելքրոպական ոռմանտիզմի սոսկ ուստական տարատեսակությունն ե»²:

Լենինը և նրա աշակերտները, սկսելով բանվոր դասա-կարգի կաղմակերպության՝ բոլշևիկյան կուսակցության ստեղծումը, պետք է ամենից առաջ քննադատության դենք

¹ Համկ(ր)կ պատմություն: Համառոտ գասընթաց, Հայ. Հրատ., էջ 26—27:

² Լենին, Կ характеристике экономического романтизма, Յերկ. Հ. Առաջ., էջ 103:

ուղղեցին նարողնիկների դեմ: 1894 թ. Հունվարի 9-ին Լե-նինը Մոսկվայում, վորտեղ անցնելիս կարճ ժամանակով կանգ եր առել, կայացած բազմամարդ, անլեզալ լերեկոյան ժողովում հանդես յեկավ նարողնիկության սյուներից մեկի՝ Վ. Վորոնցովի դեմ: Այդ ժողովին բացի Լենինից կային մարքսիստներ՝ Ստարկովը, Լյալովը, Դավիդովը, կար նաև Ա. Ի. Ռույանովան (Յելիզարովան): Այդ ժողովի մասնա-կիցների մեծամասնությունը տարբեր ուղղությունների նա-րողնիկներ եյին: Ահա թե ինչպես ե նկարագրում Ա. Ի. Ռույանովան Լենինի յելույթն այդ ժողովում:

Լենինը, «այն ժամանակ 23-ամյա յերիտասարդ, մի խումբ յերիտասարդների հետ կանդնած եր մյուս սենյակը տանող դռանը և սկզբում արտասանեց մի քանի համարձակ հեղնական ցվիչենրություններ (ուելլիկաններ:—Յե. Յա.՝), վորն ստիպեց բոլորին—մեծամասնությունը խիստ տհաճությամբ —դույները դարձնել նրա կողմը, իսկ հետո խոսք վերցրեց:

Համարձակ և վճռաբար, յերիտասարդական ամբողջ կրքոտությամբ ու համոզմունքի ուժով, բայց նաև զինված և գիտելիքներով, նա սկսեց ջախջախել նարողնիկների դոկ-տրինան՝ չթողնելով նրանում քարը քարի վրա: Յեկ թշնա-մական վերաբերմունքն այդպիսի «յերեխայտկան համարձա-կության» նկատմամբ ատտիճանաբար սկսեց փոխարինվել յեթե վոչ պակաս թշնամական, ապա արդեն ավելի հար-դելի վերաբերմունքով: Մեծամասնությունն սկսեց նայել նրա վրա, վորպես լուրջ հակառակորդի վրա: Մարքսիստա-կան փոքրամասնությունը ցնծում եր առանձնապես Վլադի-միր Խլեբչի յերկրորդ, ի պատասխան սոլիդ նարողնիկի աս-կած, խոսքից հետո: Ավելի ավագ զրուցակցի ներողամիտ վերաբերմունքը, գիտական առարկությունները չչփոթեցրին յեղորս: Նա սկսեց իր կարծիքները հաստատել նույնպես զիտական ապացույցներով, վիճակադրական թվերով և ե՛տ ավելի մեծ սարկադմով ու ուժով հարձակվեց իր հակառա-կորդի վրա: Ամբողջ զրուցակցությունը վերածվեց տուրնիրի «Հայրերի և վորդիների» այդ յերկու ներկայացուցիչների միջև: Բոլորը, հատկապես յերիտասարդությունը, հսկայա-կան հետաքրքրությամբ հետեւում եյին նրան: Նարողնիկը

սկսեց տոնն իջեցնել, խոսքերն ավելի ծուլորեն պվագնել և, վերջապես, բոլորովին նսեմացավ»:

Կարճ ասած, յերիտասարդ իլյիչը արդեն այն ժամանակ ժեղքի վրա դցեց «պատկառելի» Վ. Վորոնցովին: Հստ յերևութիւն¹, հենց այլ ժողովի մասին եր Մուկլայի ալվադ վոստիկանապեսը հետագայում տեղեկություն տալիս վոստիկանության դեպարտամենտին:

«1894 թ. հունվարի 10-ին կոնսպիրատիվ կերպով Վոզգվածենկայում Զալեժսկայի տանը կուլեժուկի ամենասորի վրոգի Ն. Ռ. Կուշնակու կազմակերպած ժողովում ներկա գանվող՝ նարոգնիկության թերիայի հայտնի հիմնադիր գրող Վ. Վ. (բժիշկ Վ. Պ. Վորոնցովը) իր փաստարկումով ստիպեց Դավիդովին լուր, անպես վոր վերջինի հայացքների պաշտպանությունն իր վրա վերցրեց վոմն Բւլյանովը (իր թե կախվածի յեղայրը), վորը և այլ պաշտպանությունն անցկացրեց դործի իսկական իմացությամբ»:

Լենինի այս յելույթն, իհարկե, միակը չեր: Նրա սկզբանական «Ի՞նչ են «ժողովրդի բարեկամները» և ի՞նչպես են նրանք մարտնչում սոցիալ-դեմոկրատների գեմ» աշխատությունը, վորն իրենից ներկայացնում և մարքսիստական խմբակների ժողովներում լենինի կարդացած ռեֆերատներում, ուղղված նարոգնիկության գեմ, շատ քաղաքներում արտատպվում եր հեկտոգրաֆի վրա և այլ յեղանակներով արտադրվում ձեռքով և, ըստ ժամանակակիցների հիշողությունների գատելով, հայտնի յեր Ռուսաստանի ամենահեռավոր անկյուններում:

Իր «Ի՞նչ են «ժողովրդի բարեկամները» և ի՞նչպես են նրանք մարտնչում սոցիալ-դեմոկրատների գեմ» (1894 թ.) դրքում լենինը մինչև վերջը մերկացրեց նարոգնիկների՝ վորպես «ժողովրդի» կեղծ «բարեկամների»՝ իսկական գեմքը, վորոնք իրականում ժողովրդի գեմ են դնում:

90-ական թվականների նարոգնիկներն ըստ եյության վաղուց հրաժարվել ելին ամեն մի հեղափոխական պայքա-

րից ընդդեմ ցարական կառավարության: Լիբերալ նարոգնիկները քարոզում եյին հաշտվել ցարական կառավարության հետ. «Երանք պարզապես կարծում են, —զրում եր Լենինն այն ժամանակվա նարոգնիկների մասին, —ուր յեթե այդ կառավարությանը մի լավ ու վորքան կարելի յե սիրալիք խնդրեն, ապա նա կարող ե ամեն ինչ լավ կարգավորել» (Լենին, հ. I, էջ 161, ոռու. Հրատ.) :

90-ական թվականների նարոգնիկներն աչք եյին վակում դյուլի չքավորության դրության հանդեպ, դյուլում տեղի ունեցող գասակարգային պայքարի հանդեպ, կուլակության կողմից չքավորությանը շահագործելու հանդեպ և գովարանում եյին կուլակային տնտեսությունների զարգացումը: Նրանք ըստ բանի եյության հանդես եյին դալիս վորպես կուլակության շահերի արտահայտիչներ:

Միենույն ժամանակ նարոգնիկներն իրենց ժուռալներում հալածում եյին մարքսիստներին: Ոռուսական մարքսիստների հայացքները դիտակցաբար աղավաղելով, սիրալ շարադրելով, նարոգնիկները հավատացնում եյին, իր թե մարքսիստները դյուլի քայլայումն են ցանկանում, թեր թե մարքսիստները ցանկանում են «ամեն մի մուժիկի յեփել գործարանային կաթսայում»: Այս կեղծ նարոգնիկական քննադատությունը մերկացնելով, լենինը ցույց տվեց, վոր բանը մարքսիստների «ցանկությունները» չեն, այլ Ռուսաստանում կապիտալիզմի զարգանալու թրական ընթացքը, վորը որով պրոլետարիատի քանակն անխուսափելիորեն ավելանում ե: Բայց պրոլետարիատը կապիտալիստական կարգերի գերեզմանափորն ե հանդիսանալու:

Լենինը ցույց տվեց, վոր ժողովրդի իսկական բարեկամներ, վորոնք ցանկանում են վոչնչացնել կապիտալիստական և կալվածատիրական ճնշումը, վոչնչացնել ցարիզը, հանդիսանում են նարոգնիկները, այլ մարքսիստները»¹:

Լենինի «Ի՞նչ են «ժողովրդի բարեկամները»» աշխատությունը պիտի ե ուսումնասիրի ամեն մի ըոլշեիկ, ամեն

¹ Համկարություն պատմություն: Համառոտ գասենթաց, հայ. Հրատ., էջ 27-28:

մի կոմյերիտական։ Այդ նշանաւլոր աշխատության մեջ ամեն մեկը խորը մտքեր կքաղի վոչ միայն անցյալի վերաբերմամբ, այլև այսորվա իրականության վերաբերմամբ։ Ընթերցելով այդ գիրքը, տեսնում ես, թե ինչպես լենինը տաօնամյակներ առաջ նախագուշակել ե մեր ամբողջ պայքարի զարգացումը, և ուշադրավ ե, վոր մասսայական, կազմակերպված բանվորական շարժման զարդացումից, կուսակցության առաջացումից դեռ շատ առաջ լենինը պարզորոշ գծեց այդ շարժման ուղին տաօնամյակներով, մատնանշելով Ռուսաստանի պրոլետարիատի ուղարքարի՝ «Երջական ուղին—կոմունիստական հեղափոխության հաղթանակը»։

Գլխավորապես լիբերալ նարոդիկուրյանը մեջ կործանիչ հարված ելով, լենինն այդ աշխատուրյան մեջ կործանիչ հարված է հասցեում ամբողջ նարոդիկուրյանը ամբողջուրյամբ վերցրած։ Դրա հետ մեկտեղ նա ցույց է տալիս 70-ական թվականների նարոդնիկության յերկու կողմերը։ մի կողմից՝ նրանց մարտական դեմքարատիզմը, և այդ մարտական դեմքարատիզմը, ցարիզմի դեմ, ճորտատիրության դեմ ուղղված պայքարը նա համարում է 70-ական թվականների նարոդնիկության մատուցած ծառայությունը, իսկ մյուս կողմից՝ նրանց ռեակցիոն ուստապիական հայացքները սոցիալիզմի հարցերում, բանվոր դասակարգի դերը չըմբռնելը, պայքարի նրանց վնասակար պրիմուներն ու մեթոդները։

70-ական թվականների նարոդնիկության այլամերկելու և լիբերալ նարոդնիկության փոխարկվելու պատճառը լենինը տեսնում է այն փաստի մեջ, վոր գյուղը յերկնեղվել է, վոր նրա մեջ տեղի յե ունեցել իշրը շերտավորում, վորը մինչեւ այդ չեյին ուղղում նկատել նարոդնիկները։

«...Գյուղն իրոք յերկնեղվում է։ Այդ քիչ ե, գյուղը վաղուց արդեն միանդամայն յերկնեղվել է։ Նրա հետ մի ասին յերկնեղվել ե նաև հին ուստական գյուղացիական սոցիալիզմը, մի կողմից տեղի տալով բանվորական սոցիալիզմին, մյուս կողմից այլամերկվելով ու փոխարկվելով քաղենիական տափակ ուղիկալիզմի։ Այդ փոխարկերպումն այլապես չի կարելի անվանել, քան այլամերում։ Գյուղացիական կյանքի առանձնահատուկ կացութաձերի մեր զարդացման միանդամայն ինքնազո՞ւ ուղիների գոկտրինայից

բուսավ ինչ-վոր ջրալի ելլեկտիզմ, վորն արդեն չի կարող ժիտել, թե ապրանքային տնտեսությունը դարձել է տընտեսական զարդացման հիմքը, թե նա վերամել և դարձել է կապիտալիզմ, և վորը միայն չի կամենում տեսնել բոլոր արտադրական հարաբերությունների բուրժուական բնույթը, չի կամենում տեսնել դասակարգային պայքարի անհրաժեշտությունն այդ կարգերում։ Քաղաքական այն ծրագրից, վոր նպատակ ուներ վստի հանել զյուղացիություններ սոցիալիզմական հեղափոխություն անելու համար՝ ընդդեմ ժամանակակից հասարակության հիմքերի—դուրս յեկալ մի ծրագիր, վորի նպատակն է կարկատել, «բարելավել» գյուղացիության գրությունը՝ պահպանելով ժամանակակից հասարակության հիմքերը»¹։

«Ի՞նչ են «ժողովրդի բարեկամները» և ի՞նչպես են նրանք մարտնչում սոցիալ-դեմոկրատների դեմ» աշխատության մեջ լենինը ցույց տվեց, վոր անցումը դեպի միբերալ նարոդնիկությունը անխուսափելիորեն բղխում եր հենց ուսուզիական նարոդնիկական սոցիալիզմի բուն իսկ իդեալից, նարոդնիկների կողմից Ռուսաստանի հասարակական զարգացումը չըմբռնելուց։

Լենինը «Կապիտալիզմի զարդացումը Ռուսաստանում» դրան մեջ և ուրիշ աշխատություններում կոնկրետ թվական նյութի վրա ցույց տվեց, վոր նարոդնիկները չեյին տեսնում կապիտալիզմի խորը հակասությունները Ռուսաստանում, չեյին ուղղում տեսնել գյուղացիության շերտավորվելը չքալորների և կուլակության, բացասում եյին կապիտալիզմի անխուսափելի կազմը մանր-ապրանքային անտեսության հետ, չեյին հասկանում, վոր մանր տարանքային արտադրությունն ամեն որ, ամեն ժամ կապիտալիզմ ե ծնում։ Նրանք խճառում եյին պրոլետարիատի վերաբերմունքը դեպի գյուղացիության տարբերակ խավերը։ Լենինն ապացուցեց նարոդնիկության այն յերազանքների ամբողջ վնասակարությունը, թե ուղարկան արտելը և ուղարկան գյուղացիական համայնքը կարելի յե կապիտալիզմի որով դարձնել սոցիա-

¹ Լենին, Ի՞նչ են «ժողովրդի բարեկամները» և ի՞նչպես են նրանք մարտնչում սոցիալ-դեմոկրատների դեմ, Ցերկ., հ. I, Հայ. Հրատ., էջ 226—227։

լիստական փոխակերպության գործիք։ Լենինը ցույց ավեց լիբերալ նարողնիկների պրոֆեկտորության ամբողջ գուհակությունը, նարողնիկներ, վորոնք յերազում և դրում եյին «ժողովրդական արտադրության մասին» կապիտալիզմի որով և ցարական ինքնակալության որով։

Նարողնիկները մարքսիստների դեմ պայքարելիս կառչում եյին մարքսիզմին թշնամի, մարքսիզմի դեմ ուղղված ամեն մի իդեալի։ Նարողնիկների այն ժամանակվա «Համաժողովրդական ժողովնալը»՝ «Русское богочтво»-ն պատսպարան եր մարքսիզմի ամեն տեսակի ողորտունիստական քննադատների համար։ Յերբ արևմտա-յելլուպական շարժման մեջ մարքսիզմի քննադատությամբ հանդես յեկավ Եղուարդ Բերնշտայնը և Դավիթի, Զերցի և ուրիշների նման ոսպորտունիստների մի ամբողջ համաստեղություն միացավ նրան, նարողնիկները վահանի վրա բարձրացրին մարքսիզմն աղավաղող այդ ոպորտունիստ-ունիղիոնիստներին, վորպես նոր ճշմարտության մունետիկների։ Մարքսի դեմ ուղղված յուրաքանչյուր մի նոր զբաղույթ նրանք փառաբանում եյին վորպես նոր հայտնություն։

90-ական թվականների լիբերալ նարոդնիկները վոչ միայն չվողունեցին բանվորական շարժումը—նրանք նրանից վախեցան։ Նրանք, իրենց «ժողովրդի բարեկամներ» անվանելով, հանդես եյին դալիս լորպես բանվորական ինքնուրույն շարժման թշնամիներ։ 1896 թ. Գետերբուրդի մանաշագործների նշանավոր դործագուլք, վորը ցարական կառավարությունից կորցեց 1897 թ. Հունիսի 2-ի որենքը, թշնամական վերաբերմունքի հանդիպեց լիբերալ նարոդնիկների կողմից։ Միխայլովսկին «Русское богочтво»-յի մեջ 1896 թ. հուլիսին դրում եր։

«Ամբոխը նեվմկու վրա... նշանակալի չափով բաղկացած գործարանայններից... շատերին հարկադրեց խորհետ սեփական գործելակերպի մասին»։

«Խորհեց», ի հարկե, նաև Ն. Կ. Միխայլովսկին։ Իսկ ի՞նչ ստացվեց այդ խորհումից։ Միխայլովսկին կարող եր միայն խղճուկ կերպով թոթովել այն միջոցների մասին, վորոնք անհրաժեշտ ե ձեռք առնել Ռուսաստանում բանվորական հարցը լուծելու համար։

«Այդ՝ համապետական միջոցառումների գործն ե, բայց մենք ել, մասնավոր մարդկակո, գեթ մեր չնչին լուժան կարող ենք մուծել թեկուղ և ժողովրդական զվարճությունների կազմակերպման նեվմկի ընկերության ձեռնարկումների նման հիմնարկների ձևով»։

Դասակարգային պայքարը վախեցնում է լիբերալ նարողնիկներին։ Նույն Միխայլովսկին հարցնում է.

«Իսկ ո՞վ իր վրա կվերցնի հայրենիքի պատմական ուղին յելլուպական պայքարի կրկնումից կանխելու մեծ աշխատանքը»։

Ենիւ պատասխանում է.

«Աներենորեն, կառավարությունը, —նա ունի դրա համար հարկավոր միջոցները և վոչ պակաս հարկավոր անաշխառություն... Կառավարությունը, և միայն կառավարությունը պետք է ստանձնի Ռուսաստանում ընդհանուր խաղաղություն և հանգստություն մատցնելու դերը»։

Իր հողվածների մեջ Միխայլովսկին ապացուցում էր, վոր բանվոր գասակարգը, գյուղացիության համեմատությամբ, զարգացման ստորին տիպն ե, իսկ դասակարգային պայքարը, Միխայլովսկու կարծիքով, «գաղաղման պարոց» և հանդիսանում։ Ահա թե ինչու Լենինը այնպիսի ուժով և հարձակմամբ լիբերալ նարոդնիկության դեմ։ ահա թե ինչու Լենինը մատնացույց և անում բանվորական շարժման համար նարոդնիկության ունեցած վնասի վրա, վորովհետեւ այդ նարոդնիկները հետադեմ են... կոծկում են անտաղությմը, խոսում են վոչ քեզ պայքարի մասին, այլ կուլտուր-իկական հաշտարար գործութեյության մասին»¹։

Զըմբոնելով կապիտալիզմի բնությունը, չտեսնելով նրա՝ զարգացման հակասական տենդենցիները, նարոդնիկները չե՛յին կարող զեկավարել պրոլետարիատի գասակարգային պայքարը, այլ ընդհակառակը—նրանք աշխատում եյին սքողել նրա նշանակությունը։ Այսպես, Միխայլովսկին նկարագրելով կապիտալիստների և բանվորների միջն յեղած փոխհարաբերություններն Անդիայում, դրում եր։

¹ Լենին, ի՞նչ են «ժողովրդի բարեկամները» և ի՞նչպես են նրանք մարտնչում սոցիալ-դեմոկրատների դեմ, Յերկ., 4. I, հայ. հրատ., էջ 249։ Ընդգծումն իմն ե։ Յե. Յա.։

«Անդիմայում մեր առաջ են վոչ թե յերկու անհաշտ, թշնամական բանակ, վորոնց միջև հնարավոր չե վոչ մի համաձայնություն, վոչ թե զազանների յերկու հոտ, վորոնք ամեն բոլի պարաստ են միմյանց հոշոտելու... հասարակության յերկուղի և զգաստացման, իսկ մասամբ անկեղծ, մեծահոգի զգացմունքների ազդեցութան տակ խելքը գլխին մարդիկ (մի այլ տեղ Միխայլովսկին դրում է՝ «Անդիմայի դիրիժյորություն անող դասակարգերը»:—ՅԵ. ՅԱ.՝) ավելի ու ավելի յեն հոգ տանում բանվոր դասակարգի նյութական, մտավոր և բարոյական շահերի մասին»:

Այդպիսի դատողություններից Միխայլովսկին յեզրակցություն եր անում. քանի վոր ամենից ավելի զարդացած կազիտալիստական յերկրներում չկա կազիտալիստի և բանվորի շահերի անհաշտելի հակառակություն, ապա ել ինչու կազմակերպել պրոլետարիատին կազիտալիստների դեմ դասակարգային պայքար մղելու համար: Զե վոր նարագնիկների համար պրոլետարիատը մնում եր հասարակության «խոցը», նրա մեջ 90-ական թվականների նարողնիկները համենայն դեպս չելին տեսնում ամենից առաջ ուժ: Նարողնիկ Վորոնցովը (Վ. Վ.-ն) գրում եր.

«Պրոլետարիատը ստեղծագործական ուժ չունի և գոյացուն ունեցող իրակարգի հողի վրա չի կարող մշակել վորեւ բան, ընդունակ նորոգելու աշխարհը, տալու սոցիալական կյանքի նոր ուղղություն...»:

Բոլշևիկյան կուսակցության կազմվելու ժամանակաշրջանում նարողնիկության դեմ մղված պայքարի նշանակությունն աճագին ե նաև այն պատճառով, վոր սոցիալ-դեմոկրատական շարժման մասնակիցներից շատերը, ինչպես նշում ե Լենինը, «սկսել եյին հեղափոխականորեն մտածել վորպես նարողովուլականներ»¹, այսինքն՝ սկսել եյին ուսուպիտական, դյուլացիտական սոցիալիզմի սխալ հայցքներից, սկսել եյին կապիտալիստական իրակարգը քննադատել ուսւ ուժանտիկների—նարողնիկների տեսակետից, և այդ մարդկանց անցումը սոցիալ-դեմոկրատիայի կողմը, հեղափոխական մարքսիզմի կողմը ուղեկցվում եր պայքարով և

կապերի խզումով այն մարդկանց հետ, վորոնց գեր քիչ առաջ յերիտասարդ այդ մարքսիստները հարգում եյին: Դեռ 90-ական թվականներին նարողնիկության այդ ազդեցությունը արտահայտվում եր յերիտասարդ հեղափոխականների վրա, և, միայն այդ ազդեցությունը հաղթահարելով, այդպիսի մարդիկ (ինչպես Ոլմինսկին) անցնում եյին գեղի մարքսիզմը: Հարկավոր ե հիշել, վոր մինչև այդ Ռուսաստանում միայն 70—80-ական թվականների նարողնիկները կարողացան կոնսպիրատիվ ամուր կազմակերպություն ստեղծել, և այդ պատճառով նրանք այն ժամանակ իրենց հանդեպ վորոշ հարդանք եյին ներշնչում: Այդ առանձնապես անհարաժեշտ ե ընդդեմ յերիտասարդ ընկերների առաջ, վորոնց մեջ կարող են մի շարք տարակուսական հարցեր առաջանալ այդ ժամանակաշրջանի փաստաթղթերի հետ ծանոթանալիս: Որինակ, Ռուսաստանյան սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության վամադարձության վամադարձության մեջ գրված ե.

«Ինչպես շարժումը, այնպես ել ուղղությունը սոցիալիստական ե, Ռուսաստանյան Սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը շարունակում ե Ռուսաստանի նախորդ ամբողջ հեղափոխական շարժման դործն ու տրադիցիաները: Կուսակցության՝ այն ամբողջությամբ վերցրած՝ մերձավորագույն խնդիրներից ամենազլիսը դնելով քաղաքական ազատության նվաճումը, սոցիալ-դեմոկրատիան դնում ե գեղի այն նպատակը, վոր պարզորոշ նշել են դեռ հին «Նարողնայա վոլյայի» փառապանծ դործիչները: Բայց այն միջոցներն ու ուղիները, վոր ընտրում ե սոցիալ-դեմոկրատիան, այլ են»²:

